Առաջին արգելքի հաղթահարումից մինչև երկրորդ արգելքի հաղթահարման ժամանակը նույնպես բարձր հարաբերակցական փոխկապվածություն ունի մարզական արդյունքի հետ՝ 0,791: Վազքատարածության այդ հատվածը հաղթահարվել է 1,05 վրկ., որը կազմում է ընդհանուր ժամանակի 8,34 տոկոսը: Մեր կարծիքով բարձր հարաբերակցական փոխկապվածությունը պայմանավորված

է կին արգելավազորդների համեմատաբար կարճ հատվածում արագության ձեռքբերմամբ:

100 մ արգելավազքի հաջորդ հատվածներում՝ Ա2-Ա3՝ 0,635, Ա3-Ա4՝ 0,610, Ա4-Ա5՝ 0,591, Ա5-Ա6՝ 0,580, Ա6-Ա7՝ 0,585 և Ա7-Ա8՝ 0,585, նկատվեց աստիճանաբար նվազող միջին հարաբերակցական փոխկապվածություն: Հետազոտվող մարզուհիների մոտ այս հատվածների հաղթահարման ժամանակը տատանվել է 1,01-0,99

վայրկյանի սահմաններում, որը կազմել է ընդհանուր ժամանակի 8,02-7,86 տոկոսը: Մեր կարծիքով այս հանգամանքը պայմանավորված է մարզուհիների արագային դիմացկունության, ինչպես նաև վարժության տեխնիկայի կատարման մակարդակով: Ա8-Ա9 և Ա9-Ա10 հատվածը բարձրակարգ մարզուհիները հաղթահարել են 1,01 և 1,04 վայրկյանում, որը կազմել է ընդհանուր ժամանակի համապատասխանաբար՝ 8,02 և 8,26 տոկոսը: Այս հատվածների հաղթահարումը մարզական արդյունքի հետ ունի հարաբերակցական ցածր փոխկապվածություն, համապատասխանաբար՝ 0,452 և 0,431: Հարաբերակցական ցածր փոխկապվածությունը մեր կարծիքով պայմանավորված է վրա հասնող հոգնածությամբ:

Վազքատարածության վերջին հատվածը, որը կազմում է 10,50 մ, մարզուհիները հաղթահարել են 1,26 վրկ. արդյունքով, որը կազմում է վազքատարածության հաղթահարման ժամանակի 10,02 տոկոսը:

Եզրակացություն: 1. Մասնագիտական գրականության ուսումնասիրության և հետազոտության արդյունքները

ցույց տվեցին, որ բարձրակարգ տղամարդ արգելավազորդների մոտ մեկնարկից մինչև երրորդ, իսկ կանանց մոտ՝ մեկնարկից մինչև երկրորդ արգելքի հաղթահարումն ունի բարձր հարաբերակցական փոխկապվածություն մարզական արդյունքի հետ, որը մեր կարծիքով պայմանավորված է շարժողական ընդունակությունների և նյարդամկանային համակարգի աշխատունակության բարձր մակարդակով: 2. Մարզական արդյունքի հետ միջին հարաբերակցական փոխկապվածություն ունի երրորդ արգելքից ութերորդ արգելքի հաղթահարման ժամանակը, որը մեր կարծիքով պայմանավորված է արագային դիմացկունության հնարավորինս պահպանմամբ: 3. Վազքատարածության վերջնամասում տղամարդկանց և կանանց մոտ նկատվեց հարաբերակցական ցածր փոխկապվածություն մարզական արդյունքի հետ, որը մեր կարծիքով վերահաս հոգնածության հետևանք է:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մամաջանյան Վ.Մ., Ավետիսյան Մ.Ս., Աթլետիկա. խոչընդոտավազք, Ուսումնական ձեռնարկ, ՀԱՊՀ, Եր, Ճարտարագետ, 2020, 96 էջ:
2. Алабин В., Масловский Е., Майшутевич М., Физические качества барьериста. Легкая атлетика, 1972.- с.13-14.
3. Балахничев В. В., Бег на 110 м с барьерами. – М. : Фис, 1987. – 80 с.
4. Зеличенко В. Б., Спринтерский и барьерный бег. М.: 2006.-134 с.

5. Озолин Н. Г., Воронкин В. И., Примаков Ю. Н., Легкая атлетика: Учебник для институтов физической культуры. М.: ФиС., 1989. - 671 с.
6. Тер-Ованесян И.А., Подготовка легкоатлета. Современный взгляд. - М. Терра спорт.- 2000. - 128 с.
7. Чесноков Н.Н., Никитушкин В.Г., Легкая атлетика: Учебник, М.: ФиС.- 2010.- 440 с.
8. [file:///C:/Users/User/Downloads/Men's%20110m%20hurdles%20-%202017%20IAAF%20World%20Championships%20\(2\).pdf](file:///C:/Users/User/Downloads/Men's%20110m%20hurdles%20-%202017%20IAAF%20World%20Championships%20(2).pdf) [մուտք՝ 05.06.2024]
9. [file:///C:/Users/User/Downloads/Women's%20100m%20hurdles%20-%202017%20IAAF%20World%20Championships%20\(1\).pdf](file:///C:/Users/User/Downloads/Women's%20100m%20hurdles%20-%202017%20IAAF%20World%20Championships%20(1).pdf) [մուտք՝ 07.06.2024]
10. <ritmo-tempovaya-struktura-tehniki-bega-na-100-m-s-barierami-kak-modelnaya-osnova-metodiki-obucheniya.pdf> [մուտք՝ 20.10.2024]
11. <https://www.youtube.com/watch?v=3idUlgQf0Vg> [մուտք՝ 04.06.2024]
12. <https://www.youtube.com/watch?v=EyaDyJZU75M> [մուտք՝ 04.06.2024]

THE STUDY OF INDIVIDUAL SEGMENTS OF THE RUNNING DISTANCE IN HURDLING

M. A. Harutyunyan

*Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: Hurdling, Inter-hurdle space, correlation, motor abilities, combination of movements.

Research relevance: Hurdles is a technically complex discipline in athletics. To achieve high athletic performance, a hurdler must have excellent coordination of movements, a refined sense of rhythm, high speed, general and specific endurance, agility, and flexibility. Modern scientific research focuses on studying the biomechanical indicators of hurdlers, improving technical elements in individual segments of the distance, enhancing motor abilities, and developing innovative training methods.

Research aim and objectives: The aim of the research is to analyze the proportion and correlations in overcoming individual segments of the distance among highly qualified hurdlers and their impact on athletic performance.

The objectives of the research are:

1. To study the correlation between the time of overcoming individual segments of the distance in hurdling and the overall athletic performance. 2. To analyze the Proportion of the start time, inter-hurdle segments and the finish to achieve athletic result.

Research methods and Organization:

1. The study of specialized literature and informational sources related to the research topic.

2. The analysis of recordings and video materials of competitions featuring highlyqualified hurdlers.

3. Conducting mathematical and statistical analysis of the obtained results.

Research results analysis: The studies revealed that in the 110-meter hurdles, the highest correlation with athletic performance was observed in the segment from the start to the first hurdle (B1), with a correlation coefficient of 0.894. High correlations were also noted for the segments B1-B2 and B2-B3, with 0.783 and 0.761, respectively. The time to overcover the segments B3-B8 showed an average correlation with performance results. However, the segments B8-B9 and B9-B10 showed low correlations, with coefficients of 0.560 and 0.548. Similarly, a low correlation of 0.542 was recorded for the segment from the last hurdle to the finish line. Similar values were calculated for women, with slight variations. A high correlation was observed from the start to the first hurdle (0.846) and from the first to the second hurdle (0.791). The segments B2-B8 showed an average correlation with athletic performance, while the segments B8-B9, B9-B10, and from B10 to the finish line recorded a low correlation.

Conclusion: The analysis of specialized literature and the results of this study allow us to conclude that the high correlation with athletic performance for highly qualified men hurdlers in the segments from the start to the third hurdle, and for women up to the second hurdle, is due to high performance, a well-developed level of motor abilities, and the neuromuscular system. The time taken to overcome the segments from the third to the eighth hurdle shows an average correlation with athletic performance, while the last segments of the distance show a low correlation for both men and women. This is likely due to the onset of fatigue.

ИЗУЧЕНИЕ ОТДЕЛЬНЫХ ОТРЕЗКОВ БЕГОВОЙ ДИСТАНЦИИ В БАРЬЕРНОМ БЕГЕ

М. А. Арутюнян

Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения

АННОТАЦИЯ

Ключевые слова: барьерный бег, межбарьерное пространство, корреляционная связь, двигательные способности, комбинация движений.

Актуальность исследования. Барьерный бег является технически сложной дисциплиной в атлетике. Для достижения высокого спортивного результата бегуну необходимо обладать хорошей координацией движений, тонким чувством ритма, высоким уровнем скорости, общей и специальной выносливости, ловкости и гибкости. Современные научные исследования посвящены изучению биомеханических показателей барьеристов, совершенствованию технических элементов на отдельных участках дистанции, двигательных способностей и разработке новейших методов тренировки.

Цель исследования. Изучить процентное соотношение и корреляционные связи преодоления отдельных отрезков дистанции у высококвалифицированных барьеристов и её влияние на спортивный результат.

Задачи исследования. 1. Изучить корреляционную связь между временем преодоления отдельных отрезков дистанции в барьерном беге и спортивным результатом. 2. Проанализировать процентное соотношение времени старта, межбарьерных отрезков и финиша для достижения спортивного результата.

Методы и организация исследования. 1. Изучение специальной литературы и информационных источников по теме исследования. 2. Анализ записей и видеоматериалов соревнований высококвалифицированных барьеристов. 3. Математико-статистический анализ полученных результатов.

Анализ результатов исследования. Исследования показали, что в беге на 110 м с барьерами наибольшая корреляция со спортивным результатом наблюдается на отрезке от старта до первого барьера (Б1) - 0,894, а также при преодолении отрезков Б1-Б2 и Б2-Б3, составляя соответственно 0,783 и 0,761. Время преодоления участков Б3-Б8 показало среднюю корреляцию со спортивным результатом. Участки Б8-Б9 и Б9-Б10 имели низкую корреляцию и составляли 0,560 и 0,548. Низкая корреляция сохранялась также на отрезке от последнего барьера до финиша - 0,542.

Для женщин рассчитаны сходные величины, но с незначительными отличиями. Высокая корреляция наблюдается от старта до первого барьера и от первого до второго барьера (0,846, 0,791). Преодоление участков Б2-Б8 имеет среднюю корреляцию со спортивным результатом, а отрезки Б8-Б9, Б9-Б10 и от Б10 до финиша - низкую корреляцию.

Краткие выводы. Анализ специальной литературы и результаты данного исследования позволяют заключить, что высокая корреляция со спортивным результатом у высококвалифицированных мужчин-барьеристов на отрезках от старта до третьего барьера, а у женщин - до второго барьера, обусловлена высокой работоспособностью, уровнем развития двигательных способностей и нервно-мышечной системы. Время преодоления отрезков от третьего до восьмого барьера имеет среднюю корреляцию со спортивным результатом, в то время как на последних отрезках дистанции у мужчин и женщин наблюдается низкая корреляция, что, на наш взгляд, связано с наступлением утомления.

Տեղեկություններ հեղինակի մասին

Մարինե Արամայիսի Հարությունյան՝ Ֆիզիկ մարզաձևերի ամբիոնի դասախոս, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: marine.harutyunyan@sportedu.am

Information about the author

Marine Aramayis Harutyunyan, Lecturer of the Chair of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: marine.harutyunyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 09.10.2024-ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 10.10.2024-ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 796.81

DOI: 10.53068/25792997-2024.3.13-39

**ԸՄԲԻՇՆԵՐԻ ԿՈՆԴԻՑԻՈՆ ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ
ՇՐՋԱՆԱԶԵՎ ՄԱՐԶՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ**

*Վ.Խ. Հարությունյան, Ա.Գ. Սյրեփանյան,
Խ.Թ. Հարությունյան, Վ.Բ. Հասրայան*
*Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Ազատ ըմբշամարտ, կոնդիցիոն ընդունակություններ, շրջանաձև մարզում, ֆիզիկական պատրաստություն, ինտենսիվ ինտերվալային մեթոդ, աճող դիմադրության մեթոդ:

Հետազոտության արդիականություն: Սպորտային պատրաստության կողմերը՝ ֆիզիկական, տեխնիկական, տակտիկական, հոգեբանական և տեսական, մեծ նշանակություն ունեն բարձր նվաճումների ձեռքբերման գործում:

Մենապայքարային մարզաձևերում հաջողության հասնելու գլխավոր նախապայմանը հակառակորդի նկատմամբ ֆիզիկական գերազանցությունն է [10]:

Սպորտային ըմբշամարտում մարզական բարձր նվաճումներն ամենից առաջ պայմանավորված են ըմբիշի ֆիզիկական պատրաստվածությամբ, որը որոշվում է շարժողական ընդունակությունների զարգացվածության մակարդակով [6, 8]: Ֆիզիկական պատրաստությունը սպորտային մարզման կարևորագույն կողմերից մեկն է և ըմբիշի մարզման հիմքը: Սպորտային ըմբշամարտում ֆիզիկական պատրաստությանն ուղղված մարզումներ անցկացվում են մարզման բոլոր

փուլերում: Ֆիզիկական պատրաստության միջոցները ֆիզիկական վարժություններն են, որոնք կիրառվում են ամենօրյա մարզման գործընթացում:

Մարզիկի շարժողական ընդունակությունների մշակման գործընթացը հնարավոր չէ իրականացնել սահմանափակ ժամանակահատվածում: Այս հիմնախնդիրը պահանջում է մարզչի և ըմբիշի շարունակական աշխատանք՝ վերջինիս ողջ մարզական կատարելագործման գործընթացի ընթացքում [4]:

Ըստ Վ.Մ.Ջացիորսկու՝ ըմբշամարտում սպորտային բարձր նվաճումները ենթադրում են պատրաստության բոլոր կողմերի բարձր մակարդակ: Իսկ ըմբիշի վարպետության հիմքը տեխնիկական պատրաստությունն է:

Սակայն, գոտեմարտում հաղթանակ տանելու, ինչպես նաև մարզական բարձր նվաճումների համար, միայն վարպետությունը բավարար չէ: Մրցակցի նկատմամբ առավելություն ստանալու համար անհրաժեշտ է ստեղծել հնարքների կատարման համար բարենպաստ պայմաններ. հաղթահարել նրա դիմադրությունը,

հնարքը կատարել որոշակի արագությամբ, դիմումով, ներդնել մկանային ճիգեր և այլն:

Ժամանակակից ըմբշամարտում առաջնային շարժողական ընդունակություններն են՝ պայթուցիկ ուժը, արագային և ուժային դիմացկունությունը [2]: Այս պնդումը ապացուցում են նաև մեր կողմից անցկացված հարցումները, որոնց վերլուծությունից պարզ դարձավ, որ բարձրակարգ մարզիչները մեծ նշանակություն են տալիս մկանային զգացողությանը, պայթուցիկ ուժին, արագաշարժությանը, կոորդինացիոն ընդունակություններին և դիմացկունությանը:

Ֆիզիկական պատրաստությունը մի գործընթաց է, որն ուղղված է մարզիկների շարժողական ընդունակությունների մշակմանը, ինչը պատրաստության բոլոր կողմերի կատարելագործման համար հիմք է: Միայն ըմբիշի ֆիզիկական պատրաստության բարձր մակարդակը կարող է նպաստել ըմբշամարտին հատուկ մրցակցական խնդիրների լիարժեք լուծմանը, նրա տեխնիկատակտիկական և հոգեբանական պատրաստության հնարավորությունների առավելագույնս և արդյունավետ դրսևորմանը:

Մի շարք հեղինակներ ուժը, դիմացկունությունը և արագաշարժությունը վերագրում են կոնդիցիոն ընդունակությունների շարքին: Կոնդիցիոն ընդունակություններով է պայմանավորված նաև օր-

գանիզմի աշխատունակությունը կանխորոշող ֆունկցիոնալ հնարավորությունները [1, 13]:

Կոնդիցիոն ընդունակությունները մշակվում են ընդհանուր նախապատրաստական, հատուկ պատրաստության և մրցակցական վարժությունների միջոցով:

Ընդհանուր նախապատրաստական վարժությունները նպատակ ունեն ապահովելու ըմբիշների համակողմանի ներդաշնակ զարգացումը: Այդպիսի վարժությունների կազմը շատ ընդգրկուն է և անսահման:

Դրանք կատարվում են առանց առարկաների, առարկաներով և գործիքների օգնությամբ: Դրանց գլխավոր ուղղվածությունը բոլոր շարժողական ընդունակությունների մշակումն է և մարզիկների աշխատունակության բարձրացումը [5, 6, 8]:

Հատուկ պատրաստության վարժությունները սովորաբար բաժանվում են երկու խմբի. կոորդինացիոն և կոնդիցիոն: Սրանք իրենց բնույթով մոտ են մրցակցական գոտեմարտերի պայմաններին [2]:

Ժամանակակից ըմբշամարտը բարդ ֆիզիոլոգիական պահանջներ է ներկայացնում մարզիկներին, մասնավորապես՝ առավելագույն ուժի, հզորության, մկանային դիմացկունության, առավելագույն անբորբ հզորության և անաերոբ կարողությունների զարգացվածություն բարձր մակարդակ [12]:

Կոնդիցիոն վարժություններն ուղղված են ըմբիշների արագաշարժության, ուժի, դիմացկունության և դրանց համալիր դրսևորումների (պայթուցիկ ուժ, արագային դիմացկունություն, ուժային դիմացկունություն) կատարելագործմանը:

Այս ընդունակությունների զարգացման արդյունավետությունը պայմանավորված է նրանց մշակման մեթոդիկայով: Վերջին տարիներին ըմբշամարտի պրակտիկայում լայնորեն կիրառվում են մարզման շրջանաձև մեթոդով կազմակերպված մարզումները, որն էականորեն բարելավում է մարզիկների ընդհանուր և հատուկ ֆիզիկական պատրաստվածության մակարդակը, քանի որ այն հնարավորություն է տալիս նշանակալի մեծացնել մարզման շարժիչ խտությունը, որն ապահովում է կատարվող մարզումային աշխատանքի ծավալի և լարվածության մեծացումը: Բացի դրանից շրջանաձև մարզումը ֆիզիկական վարժությունների կիրառման կազմակերպման այնպիսի մեթոդ է, որը նախընտրելի պայմաններ է ստեղծում մարզվողների շարժողական ընդունակությունների համալիր մշակման համար [10]:

Շրջանաձև մարզումն օգնում է մշակել ֆիզիկական պատրաստությունը՝ հատկապես ուժը, արագությունը, դիմացկունությունը և ճկունությունը, ինչն անհրաժեշտ է ըմբշամարտի տեխնիկական հնարքները արդյունավետ կատարելու համար [14]:

Շրջանաձև մարզման մեկ այլ արժեքավոր գիծը, խիստ կարգավորված և անհատականացված բեռնվածությունը հաջողությամբ համատեղելու հնարավորությունն է:

Աշխատանքի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ սպորտային ըմբշամարտում հաջողության նախապայմաններից մեկը համարվում է կոնդիցիոն ընդունակությունների բարձր մակարդակը, որի ձեռքբերման լավագույն միջոցներից մեկը շրջանաձև մարզումն է:

Հետազոտության նպատակը: Մշակել 18-20 տարեկան ազատ ոճի ըմբիշների կոնդիցիոն ընդունակությունների կատարելագործմանն ուղղված շրջանաձև մարզման արդյունավետ մեթոդիկա:

Հետազոտության խնդիրները.

1. Ուսումնասիրել կոնդիցիոն ընդունակությունների մշակման առաջատար մեթոդներն ու միջոցները:

2. Բացահայտել շրջանաձև մարզման արդյունավետությունը կոնդիցիոն ընդունակությունների մշակման գործում:

3. Գիտափորձով հաստատել մեր կողմից մշակված մեթոդիկայի արդյունավետությունը:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության նպատակի և խնդիրների լուծման նպատակով կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում, մանկավարժական դի-

տումներ, անկետավորում, մանկավարժական թեստավորում, մաթեմատիկական վիճակագրության մեթոդ:

Հետազոտությունը կազմակերպվել է Երևանի Վ. Զատիկյանի անվան «Մալաթիա» մարզական ակումբում և Երևանի «Դինամո» ՄՀԿ-ում: Գիտափորձին մասնակցել են ազատ ըմբշամարտի ուսումնամարզական խմբերի 18-20 տարեկան 20 ըմբիշներ: Գիտափորձի մասնակիցներից կազմվել է երկու խումբ՝ փորձարարական (Դինամո ՄՀԿ սաներից) և ստուգողական (Վ.Զատիկյանի անվան «Մալաթիա» մարզական ակումբի սաներից)՝ յուրաքանչյուրում ընդգրկելով 10-ական ըմբիշ: Մանկավարժական գիտափորձը տևել է 5 ամիս՝ 2023 թվականի հոկտեմբերից մինչև 2024 թվականի փետրվար:

Մանկավարժական թեստավորման նպատակը գիտափորձի արդյունքում ստուգողական և փորձարարական խմբերում տեղի ունեցած փոփոխությունների արձանագրումն է: Այդ նպատակով կատարվում է երկու թեստավորում՝ նախնական՝ գիտափորձի սկզբում և վերջնական՝ գիտափորձից հետո:

Անկետավորման միջոցով ուսումնասիրվել է ազատ ըմբշամարտի 50 մարզիկարծիք, որը հնարավորություն տվեց պարզել, թե մասնագետները ինչ տեղ են տալիս կոնդիցիոն ընդունակությունների մշակմանը, դրանց կատարելագործման ընթացքում ինչպիսի մեթոդիկա են

նախընտրում, ինչպես են կազմակերպում շրջանաձև մարզումները և այլն:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Մարզիչների հետ կազմակերպված հարցումից պարզվեց, որ մեծամասնությունը (87%)՝ որպես առաջատար շարժողական ընդունակություններ համարում են կոնդիցիոն ընդունակությունները՝ արագաշարժությունը (33%), ուժը (30%) և դիմացկունությունը (27%):

Մարզիչները կոնդիցիոն ընդունակությունների համալիր դրսևորումներն ըստ կարևորության բաժանեցին հետևյալ կերպ՝ արագաուժային ընդունակություններ՝ 40%, արագային դիմացկունություն՝ 35%, ուժային դիմացկունություն՝ 25%:

Շրջանաձև մարզման մեթոդներին վերաբերող հարցերից պարզվեց, որ մարզիչների 60%-ը նախապատվությունը տալիս է ինտենսիվ ինտերվալային մեթոդին, 35%-ը՝ էքստենսիվ ինտերվալային մեթոդին, իսկ 5%-ը՝ կրկնողական մեթոդին:

Անկետավորումից պարզվեց նաև, որ մարզման գործընթացում միայն մարզիչների 45%-ն է կիրառում շրջանաձև մարզում, սակայն հարցվածների 95%-ի կարծիքով ուժը, արագությունը և դիմացկունությունը համատեղ կարելի է մշակել միայն շրջանաձև մարզման միջոցով:

Մանկավարժական գիտափորձից առաջ փորձարարական և ստուգողական խմբերում ընդգրկված ըմբիշների կոնդիցիոն ընդունակությունները ստուգվել են հայտորոշիչ թեստավորման միջոցով:

www.sportedu.am

Թեստավորման համար ընտրվել է 6 վարժություն.

1. տեղից հեռացատկ (սմ),
2. մարզական մանեկենի արտակորված գցումներ՝ 10 անգամ, վրկ.,
3. վազք 200 մ, վրկ.,
4. մարզական մանեկենի արտակորված գցումներ՝ 30 անգամ, վրկ.,
5. ձգումներ պտտածողի վրա՝ մինչև հրաժարվելը,
6. ցատկեր կքանստած դրությունից՝ մինչև հրաժարվելը:

Նախնական թեստավորումը ցույց տվեց, որ փորձարարական և ստուգողական խմբերում ընդգրկված ըմբիշների

կոնդիցիոն ընդունակությունների մակարդակը գրեթե նույնն է (աղյուսակ 1):

Մանկավարժական գիտափորձի ընթացքում ստուգողական խումբը մարզվել է՝ ըստ ուսումնամարզական պլանի, իսկ փորձարարական խումբը՝ ըստ մեր կողմից նախօրոք կազմված պլանի, որտեղ փորձարկվել է կոնդիցիոն ընդունակությունների բարելավման նպատակով մշակված մեթոդիկան:

Մեր կողմից մշակված մեթոդիկայի էությունը կայանում է նրանում, որ մարզվողները շաբաթական երկու անգամ անցկացնում են շրջանաձև մարզում:

Աղյուսակ 1

Ստուգողական և փորձարարական խմբերի նախնական թեստավորման արդյունքների մաթեմատիկական վերլուծություն				
Վարժություններ	ՍԽ	ՓԽ	t	P
	$\bar{x} \pm m_x$	$\bar{x} \pm m_x$		
տեղից հեռացատկ (սմ)	224±4.5	220±4.1	0.64	>0.05
մարզական մանեկենի արտակորված գցումներ՝ 10 անգամ/վրկ.	13.8±0.21	14±0.24	0.6	>0.05
վազք 200 մ/վրկ.	28.9±0.16	28.8±0.3	0.28	>0.05
մարզական մանեկենի արտակորված գցումներ՝ 30 անգամ/վրկ.	108±2.1	110±2.8	0.71	>0.05
ձգումներ պտտածողի վրա՝ մինչև հրաժարվելը	18±0.8	18.3±0.5	0.29	>0.05
ցատկեր կքանստած դրությունից՝ մինչև հրաժարվելը	20.9±0.5	21.1±0.5	0.27	>0.05

Շաբաթվա առաջին շրջանաձև մարզում անցկացվում է ինտենսիվ ինտերվալային մեթոդով և ուղղված է ընդհանուր ֆիզիկական պատրաստությանը: www.sportedu.am

Ընտրվում է տարբեր մկանախմբերի արագաուժային ընդունակությունների, արագային և ուժային դիմացկունության մշակմանն ուղղված 12 վարժություն:

Այսինքն՝ ստեղծվում է 12 կայան: Կայաններն այնպես են համարակալվում, որ մի կայանից մյուսն անցնելիս միևնույն մկանախմբերը չձանրաբեռնվեն: Յուրաքանչյուր վարժություն կատարվում է առավելագույն արագությամբ՝ 30 վ տևողությամբ: Վարժությունն ավարտելուց հետո մարզվողներին տրվում է 30 վ հանգիստ, որից հետո փոխվում են կայանները և մարզչի ազդանշանով սկսում հաջորդ վարժությունը: Մեկ շրջանից հետո տրվում է 2 ր տևողությամբ հանգիստ, այնուհետև, նույն սկզբունքով կատարվում են երկրորդ և երրորդ շրջանները: Այստեղ կարևոր է ուշադրություն դարձնել, որ ուժային դիմացկունությանն ուղղված վարժությունները կատարվեն համապատասխան ծանրություններով, որպեսզի ապահովվի անհրաժեշտ մարզումային «էֆեկտը»: Այս վարժություններում օպտիմալ բեռնվածությունն ապահովելու համար հարկավոր է կատարել 12-15 կրկնություն:

Իսկ երկրորդը, որն ուղղված է հատուկ ֆիզիկական պատրաստությանը, կատարվում է գորգի վրա՝ աճող դիմադրության մեթոդով:

Գոտեմարտ՝ մրցակիցներին փոխելով: Ընտրում են միևնույն քաշային կարգի 5 - 6 մարզիկ, որոնք պետք է գոտեմարտեն միմյանց հետ 1 րոպե ժամանակով: Յուրաքանչյուր ըմբիշի տրվում է

համար I, II, III, ... և այլն: Յուրաքանչյուր շրջանի ավարտից հետո մարզիկների համարները փոխվում են՝ I համարը դառնում է վերջինը, II համարը՝ I, III համարը՝ II և այլն:

Մարզումը, կախված խմբի քանակից, կատարվում է 5-6 շրջանով, ընդ որում՝ յուրաքանչյուր ըմբիշ պետք լինի 1 համար: Առաջին շրջանի ավարտից հետո, առանց հանգստի ըմբիշներին տրվում է նոր համարներ և սկսվում է հաջորդ շրջանը: 2-րդ աղյուսակում բերված է մեկ շրջանի գոտեմարտերի հերթականությունը՝ հինգ հոգու համար:

Մանկավարժական գիտափորձից հետո կատարվել է ևս մեկ մանկավարժական թեստավորում՝ պարզելու ստուգողական և փորձարարական խմբերում գրանցված փոփոխությունները:

Կոնդիցիոն ընդունակությունների վերջնական թեստավորման մաթեմատիկական վերլուծությունից (աղյուսակ 3) պարզվեց, որ տեղից հեռացատկ վարժության արդյունքներում, գրանցված տարբերությունները՝ ըստ Սթյուդենտի վստահելիության չափանիշի հավաստի չեն, այսինքն՝ $P > 0.05$: Այդ պատճառով որոշեցինք հաշվել գրանցված արդյունքների աճի տեմպերը. ստուգողական խմբում այն կազմել է 3.1%, փորձարարական խմբում՝ 6.8%:

Աղյուսակ 2

Բույները	Գոտեմարտող մրցակիցների ըստ համարները
I	I - II
II	I - III
III	I - IV
IV	I - V
V	II - III
VI	II - IV
VII	II - V
VIII	III - IV
IX	III - V
X	IV - V

Երկրորդ վարժությունում՝ մարզական մանեկենի արտակորված զցումներ՝ 10 անգամ, վրկ., գրանցված տարբերությունները հավաստի են, այսինքն՝ $P < 0.05$:

Արագային դիմացկունությունը բնութագրող վարժություններում (վազք 200 մ, մարզական մանեկենի զցումներ՝ 30 անգամ, վրկ.) ստուգողական և փորձարարական խմբերում գրանցված տարբերությունները հավաստի են՝ երկու դեպքում էլ՝ $P < 0.05$:

Ուժային դիմացկունությունը բնութագրող՝ ձգումներ պտտածողի վրա՝ մինչև հրաժարվելը վարժության արդյունքներում, գրանցված տարբերությունները հավաստի չեն, իսկ աճի տեմպերն

ունեն հետևյալ տեսքը. ստուգողական խումբ՝ 18.3%, փորձարարական խումբ՝ 24.5%:

Վերջին՝ ցատկեր կքանստած դրությունից՝ մինչև հրաժարվելը վարժության արդյունքներում, գրանցված տարբերությունները նույնպես հավաստի են:

Այսպիսով՝ մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը ապացուցում է մեր կողմից առաջ քաշված մեթոդիկայի արդյունավետությունը ըմբիշների կոնդիցիոն ընդունակությունների մշակման գործում, որը աշխատունակության բարձրացման համար հիմքն է:

Աղյուսակ 3

Ստուգողական և փորձարարական խմբերի վերջնական թեստավորման արդյունքների մաթեմատիկական վերլուծություն				
Վարժությունները	ՍԽ	ՓԽ	t	P
	$\bar{x} \pm m_x$	$\bar{x} \pm m_x$		
տեղից հեռացատկ (սմ)	231±3.2	235±3.1	0.88	>0.05
մարզական մանեկենի արտակորված գցումներ՝ 10 անգամ/վրկ.	13±0.06	12.5±0.1	4.22	<0.05
վազք 200 մ/վրկ.	27.4±0.15	26.8±0.22	2.18	<0.05
մարզական մանեկենի արտակորված գցումներ՝ 30 անգամ/վրկ.	97±1.3	92±1.2	2.67	<0.05
ծգումներ պտտածողի վրա՝ մինչև հրաժարվելը	21.3±0.8	22.8±0.5	1.48	>0.05
ցատկեր կքանստած դրությունից՝ մինչև հրաժարվելը	23.2±0.3	24.8±0.4	2.63	<0.05

Եզրակացություն: Գիտամեթոդական գրականության ուսումնասիրությունը, անկետավորման և մանկավարժական գիտափորձի արդյունքների վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս հանգելու հետևյալ եզրակացության.

1. Ըստ հարցված մասնագետների՝ ըմբիշի առաջնային շարժողական ընդունակություններն են՝ արագությունը, ուժը և դիմացկունությունը:

2. Ապացուցվեց, որ կոնդիցիոն ընդունակությունների համալիր դրսևորումներն ըմբշամարտում ըստ կարևորության ունեն հետևյալ տեսքը՝ արագաուժային ընդունակություններ՝ 40%, արագային դիմացկունություն՝ 35%, ուժային դիմացկունություն՝ 25%:

3. Պարզվեց, որ մասնագետներն իրենց պրակտիկայում շրջանաձև մարզում կազմակերպում են հետևյալ մեթոդներով՝ ինտենսիվ ինտերվալային՝ 60%, էքստենսիվ ինտերվալային՝ 35%, կրկնողության՝ 5%:

Կոնդիցիոն ընդունակությունների բարելավմանն ուղղված շրջանաձև մարզումների արդյունավետությունը բարձրացնելու համար անհրաժեշտ է մարզման շաբաթական ցիկլում կիրառել առնվազն երկու անգամ:

Հաստատվեց, որ շրջանաձև մարզման ընթացքում շատ կարևոր է վարժությունների միջև հանգստի տևողության ճիշտ ընտրությունը: Դրա կրճատումը կամ ավելացումը կարող է նվազեցնել մարզումային էֆեկտը:

www.sportedu.am

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Առաքելյան Վ.Բ., Ղազարյան Ֆ.Գ., Մարզիկների կոնդիցիոն ընդունակությունների մշակման հիմունքները, Երևան, 2008, 80 էջ:
2. Ղազարյան Ֆ.Գ., Շարժողական ընդունակությունների բանաձևը, Մենագրություն, Երևան, 2015, 229 էջ:
3. Егиазарян А.А., Развитие скоростно-силовых способностей борцов вольного стиля с использованием предельных отягощений. автореф. дисс. ..., к.п.н.–Москва, 2018.-24с.
4. Куванов В.А., Куванов Я.А., Коростелев Е.Н., Средства и методы развития физических качеств в спортивной борьбе: Методические указания к практическим занятиям / Санкт- Петербургский горный университет.. СПб, 2021. 38 с.
5. Зациорский В.М., Физические качества спортсмена: основы теории и методики воспитания. – 4-е изд. – М. : Спорт, 2019 – 200 с.
6. Матвеев Л.П., Основы спортивной тренировки, М., ФиС, 1977. -271с.
7. Султанахмедов С.С. Основы физической подготовки в вольной борьбе: учебное пособие. М.: ООО «Торговый дом «Советский спорт», 2020. — 120 с.
8. Филин В.П., Теория и методика юношеского спорта, М., ФиС, 1987, 128с.
9. Шахмурадов Ю.А., Вольная борьба: научно-методические основы многолетней подготовки борцов, Махачкала, 2011. -367с.
10. Шолех М., Круговая тренировка: теоретические, методические и организационные основы одной из современных форм использования физических упражнений в школе и спортивной тренировке.-Пер. с нем. Л.М. Мирского, - М.: Физкультура и спорт, 1966. - 166с.
11. Alfredatama, I., Fauzi, Tomoliyus, Budiarti, R., & Prabowo, T. A. (2024). The Impact of Functional Training on Physical Abilities in Combat Sport: A Mini Review. *Journal of Advances in Sports and Physical Education*, 7(5), 105-110.
12. Chaabene Helmi, Negra Yassine, Bouguezzi Raja, Mkaouer Bessem, Franchini, Emerson, Julio Ursula, Hachana Younés: (2017). Physical and Physiological Attributes of Wrestlers Brief Review. *Journal of Strength and Conditioning Research* 31(5), 1411-1442,
13. Hirtz P.-Theorie und Praxis der Körperkultur.-1977.-N7.-ss. 503-510

14. Juhanis, Iskandar, Endrawan, I. B., Adi, S., & Santoso, S. (2024). Impact of motor education levels and circuit training on enhancing wrestling techniques among adolescent athletes. *Journal Sport Area*, 9(3), 386-397. [https://doi.org/10.25299/sportarea.2024.vol9\(3\).16182](https://doi.org/10.25299/sportarea.2024.vol9(3).16182)

IMPROVING THE CONDITIONING ABILITIES OF WRESTLERS THROUGH CIRCULAR TRAINING

*V.Kh. Harutyunyan, A.G. Stepanyan,
Kh.T. Harutyunyan, V.B. Hasratyan
Armenian State Institute of Physical Culture
and Sport , Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: Freestyle wrestling, conditional abilities, circular training, physical training, high-intensity interval method, method of increasing resistance.

Research relevance: The relevance of this research is determined by the fact that circular training effectively enhances conditional abilities, which are crucial for achieving high athletic performance in wrestling.

Research aim and objectives: The purpose of the study is to develop an effective circular training methodology aimed at improving the conditioning abilities of freestyle wrestlers aged 18-20.

Research methods and organization: The following methods were used: the study of scientific and methodological literature, pedagogical observations, questionnaires, pedagogical testing, mathematical statistics. Pedagogical testing was used to examine the changes in the conditional abilities of wrestlers that occurred during the experiment.

Research results analysis: The analysis of the experiment results showed positive changes in the conditional abilities of wrestlers in both the experimental and control groups. Except for the second and fifth exercises, the positive shifts recorded in all other exercises were statistically significant at $p < 0.05$.

Conclusion: Circuit training is one of the most effective methods for organizing the training process. In wrestling, circuit training is most commonly conducted using the high-intensity interval method and the progressive resistance method. To improve conditional abilities, it is recommended to perform at least two circuit training sessions per week.

УЛУЧШЕНИЕ КОНДИЦИОННЫХ СПОСОБНОСТЕЙ БОРЦОВ ПОСРЕДСТВОМ КРУГОВОЙ ТРЕНИРОВКИ

В.Х. Арутюнян, А.Г. Степанян,

Х.Т. Арутюнян, В.Б. Асратян

*Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: Вольная борьба, кондиционные способности, круговая тренировка, физическая подготовка, интенсивный интервальный метод, метод возрастающего сопротивления.

Актуальность исследования: Актуальность работы обусловлена тем, что круговая тренировка позволяет эффективно совершенствовать кондиционные способности, которые имеют большое значение в достижении высоких спортивных результатов в борьбе.

Цель исследования: Разработать эффективную методику круговой тренировки, направленную на совершенствование кондиционных способностей борцов вольного стиля 18-20 лет.

Методы и организация исследования: Применялись следующие методы: изучение научно-методической литературы, педагогические наблюдения, анкетирование, педагогическое тестирование, математическая статистика. С помощью педагогического тестирования были изучены изменения в кондиционных способностях борцов, произошедшие в ходе эксперимента.

Анализ полученных результатов: Анализ результатов эксперимента показал, что в кондиционных способностях борцов экспериментальной и контрольной групп произошли положительные изменения. За исключением второго и пятого упражнений, положительные сдвиги, зафиксированные во всех остальных упражнениях, достоверны при $p < 0.05$.

Краткие выводы: Круговая тренировка является одним из самых эффективных средств организации тренировочного процесса. В спортивной борьбе круговые тренировки чаще всего организуются по интенсивному интервальному методу и методу возрастающего сопротивления. Для совершенствования кондиционных способностей целесообразно проводить как минимум две круговые тренировки в неделю.

Տեղեկություններ հեղինակների մասին

Վարդան Խաչիկի Հարությունյան՝ ասպիրանտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: vardan.harutyunyan.2023@sportedu.am,

Արտակ Գառնիկի Ստեփանյան՝ մ.գ.թ., ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի դոցենտ, Երևան, Հայաստան, E.mail: artak.stepanyan@sportedu.am

Խաչիկ Թորգոմի Հարությունյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: khachik.harutyunyan@sportedu.am

Վահե Բակուրի Հասրաթյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: vahe.hasratyan@sportedu.am

Information about the authors

Vardan Khachik Harutyunyan, PhD student, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, e-mail: vardan.harutyunyan.2023@sportedu.am

Artak Garnik Stepanyan, PhD, Associate Professor of the Chair of Theory, Methodology and Adaptive Physical Culture of Physical Education, Yerevan, Armenia, e-mail: artak.stepanyan@sportedu.am

Khachik Torgom Harutyunyan, Associate Professor of the Chair of Wrestling and Oriental Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, e-mail: khachik.harutyunyan@sportedu.am

Vahe Bakur Hasratyan, Associate Professor of the Chair of Wrestling and Oriental Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, e-mail: vahe.hasratyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 11.09.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 12.09.2024–ին:

Գրախոս՝ մ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Ղազարյան

ՀՏԴ 372.03

DOI: 10.53068/25792997-2024.3.13-51

**ԴԻԴԱԿՏԻԿ ՍԿՉԲՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԵՔ ԳԻՏԱԿԱՆ
ՃՅՈՒՂԵՐԻ ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ**

*Ֆ. Գ. Ղազարյան, Է. Ջ. Մարտիրոսյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պեդագոգական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Դիդակտիկա, ուսուցման սկզբունքներ, մանկավարժություն, ֆիզիկական դաստիարակություն, դասագիրք, սպորտային պատրաստություն:

Հետազոտության արդիականություն: Մարդկային գործունեության մեջ ուսուցումն ունի կարևոր նշանակություն. այն մշտապես եղել է բոլոր պատմական ժամանակաշրջաններում (Я. А. Коменский, Л. В. Занков, Б. Т. Лихачев, М. А. Данилов, М. Н. Скаткин, Л. Клигберг, В. Оконь, Հ. Գ. Քարամյան): Սակայն համաշխարհային մանկավարժական մտքի զարգացմանը զուգընթաց ուսուցումը հատուկ գիտական ուսումնասիրման և հիմնավորման առարկա դարձավ հատկապես Յու. Ա. Կոմենսկու «Մեծ դիդակտիկա» աշխատությունից հետո [4]: «Դիդակտիկա» տերմինը արդեն օգտագործվել է 17-րդ դարում: Այն դիտարկվում էր որպես մանկավարժության մի մաս, որն զբաղվում էր ուսուցման հարցերով: Այն ժամանակ իմաստավորվում էր, որ ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովվում է, եթե այստեղ կիրառված են հատուկ դիդակտիկական սկզբունքները:

Մանկավարժության պատմությունը վկայում է, որ տարբեր ժամանակների ու տարբեր երկրների մանկավարժները ու մտավորականները մշտապես ձգտել են՝ որոշելու ուսուցման դիդակտիկական սկզբունքները, որոնք նպաստում են կրթական գործընթացի հաջող իրականացմանը: Ընդհանուր դիդակտիկայի սկզբունքների որոշման առաջին փորձերը նախաձեռնել է Յու. Ա. Կոմենսկին (1592-1670)՝ բնահամապատասխանության սկզբունքը, Ֆ. Ա. Դիստերվեզը (1790-1866)՝ կուլտուրայի համապատասխանության սկզբունքը, Կ. Դ. Ուշինսկին (1824-1870)՝ մատչելիություն, կայունություն և աստիճանականության սկզբունքները:

Դաստիարակության մասին գիտությունում «սկզբունք» են անվանում ուսուցման և դաստիարակության ընդհանուր օրինաչափություններն արտացոլող առավել կարևոր տեսամեթոդական դրույթները, ձևերը ու մեթոդները, այդ թվում՝ ֆիզիկական դաստիարակության և սպորտային պատրաստության ոլորտում: Ուսուցման սկզբունքները դրանք ուսումնական գործընթացի՝ որպես դիդակտիկայի կատեգորիա, կազմակերպման ընդհանուր նորմերն են [13]: Օրենքները և

օրինաչափությունները տեսական հիմք են ծառայում՝ մշակելու ուսուցման սկզբունքներ և դրանք մանկավարժական գործունեության մեջ իրականացնելու համար: Շատ մանկավարժական օրինաչափություններ այնքան բազմակողմ են, որ դրանցից դուրս է բերվում ոչ թե մեկ, այլ մի քանի սկզբունքներ [2, 16]: Մանկավարժական գործընթացի ամբողջական համատեքստում առանձնացվում է երկու խումբ սկզբունքներ՝ մանկավարժական գործընթացի կազմակերպման և ուսուցանվողների գործունեության ղեկավարման [14]:

Դասական մանկավարժությունում դաստիարակության և կրթության ընդհանուր սկզբունքներին են դասվում, ինչպես հայտնի է գիտակցականության ու ակտիվության, զննականության, մատչելիության ու անհատականության սկզբունքները [11, 15]: Ընդունված է դրանք անվանել ընդհանուր մեթոդական սկզբունքներ, որոնք հաստատվեցին և ֆիզիկական դաստիարակության ու սպորտային պատրաստության մեթոդիկայում՝ որպես մանկավարժական գործընթացի ձևերից մեկը: Սակայն, այստեղ այդ սկզբունքները ստանում են նոր յուրահատուկ բովանդակություն և դրսևորում:

Ուսուցման սկզբունքներն ունեն պատմական բնույթ, արտացոլվում են որոշակի պահանջմունքներ: Կյանքի փոփոխությունների, սոցիալտնտեսական

պայմանների ազդեցության ներքո, բնականաբար փոխվում են ուսուցման սկզբունքները [9]: Որոշ սկզբունքներ կորցնում են իրենց իմաստը, օրինակ՝ կոմունիստական դաստիարակության սկզբունքները, և դրանց փոխարեն երևան են գալիս նորերը:

Գիտամեթոդական գրականության վերլուծությունը հնարավորություն է ընձեռում կատարելու որոշակի ամփոփումներ: Լեհ դիդակտ Վ. Օկոնի արդարացի բնորոշմամբ ուսուցման սկզբունքները՝ դրանք դիդակտիկայի առավել վիճելի բնագավառն է, այստեղ առկա են վիճելի հակասական կարծիքներ [12]: Դիդակտիկ սկզբունքները դեռևս չեն ստացել իրենց վերջնական լուծումը, չեն որոշվել դրանց անվանացանկի մշակման ելադիրքերը, քանակը, բնորոշումները [9, 10]: Բացակայում է միասնական կարծիք՝ ուսուցման սկզբունքների բնորոշման վերաբերյալ, առկա են մանկավարժների ոչ միատեսակ ու հակասական կարծիքներ [6]:

Այդ տեսակետից դիդակտիկայի սկզբունքները դիտարկվել ու վերլուծվել են գիտական երեք ուղղությունների՝ ընդհանուր մանկավարժության, ֆիզիկական դաստիարակության, սպորտային մանկավարժության լույսի ներքո:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակն է՝ դիդակտիկ սկզբունքների ռետրոսպեկտիվ վերլուծությունը, իսկ խնդիրը՝ որոշել դրանց գերակա նշանակությունը երեք ուսումնական առարկաներում՝ ընդհանուր

www.sportedu.am

մանկավարժություն, ֆիզիկական դաստիարակության տեսություն և մեթոդիկա և սպորտային պատրաստություն:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտության հիմնական մեթոդներն են՝ պատմատեսական և տրամաբանական վերլուծությունը, գոյություն ունեցող ու մատչելի գիտամեթոդական գրական աղբյուրների քննարկման և ընդհանրացման էմպիրիկ մեթոդները: Ուսումնասիրվել են մի քանի հարյուր ինֆորմացիայի աղբյուրներ՝ մենագրություններ, տեղեկատուներ, հանրագիտարաններ, դասագրքեր ու ուսումնամեթոդական ձեռնարկներ՝ մանկավարժությունից, ֆիզիկական դաստիարակության տեսությունից:


Հետազոտության արդյունքները: Գրական աղբյուրների ուսումնասիրությունը և ընդհանրացումը հնարավորություն ընձեռեց առանձնացնել դիդակտիկ սկզբունքների նշանակման հեղինակային եզրույթներ (Տրամագիր 1):

Պարզվեց, որ երեք գիտական ուղղությունների դասագրքերի և ուսումնական ձեռնարկների հեղինակների առաջին խումբ 50 տոկոսը «դիդակտիկ սկզբունքներ» անվանում են որպես «ուսուցման սկզբունքներ»: Հեղինակների

երկրորդ խումբը՝ ընդհանուր մանկավարժություն և տարբեր մարզաձևերի դասագրքերի հեղինակները (20,8 %) հավաժ են ուսուցման սկզբունքներն անվանել «դիդակտիկ սկզբունքներ»: Երրորդ խումբը՝ ֆիզիկական դաստիարակություն տեսություն և մեթոդիկայի և սպորտային պատրաստություն հրատարակումների հեղինակները (8,3 %) ուսուցման սկզբունքները սահմանել՝ որպես «մեթոդական սկզբունքներ»:

Ի դեպ, բացահայտվել են և այնպիսի տերմինաբանական նշանակումներ, ինչպիսիք են՝ «ուսուցման ու դաստիարակության սկզբունքներ», «ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի սկզբունքներ», «ընդհանուր մեթոդական սկզբունքներ», որոնց չափաբաժինը կազմում է 4,2 տոկոս:

Առանձին հեղինակներ նախապատվությունը տալիս են այնպիսի տերմինաբանական հասկացություններին, ինչպիսիք են՝ «ուսումնական գործընթացի կազմակերպման մանկավարժական սկզբունքներ», «ուսուցման և մարզման սկզբունքներ», «ֆիզիկական դաստիարակության սկզբունքներ»:



Տրամագիր 1. Դիդակտիկական սկզբունքների հեղինակային տերմինաբանական նշանակումները՝

1.ուսուցման՝ 50 տոկոս, 2. դիդակտիկական՝ 20,8 տոկոս, 3. մեթոդիկական՝ 8,3 տոկոս, 4.ուսուցման և դաստիարակության, ֆիզիկական դաստիարակության մեթոդիկայի, ընդհանուր մեթոդական՝ 4,2 տոկոս, 5. մանկավարժական, ուսումնական գործընթացի կառուցման, ուսուցման և մարզման, ֆիզիկական դաստիարակության՝ 2,1 տոկոս

Վերոհիշյալ հիման վրա կարելի է եզրակացնել, որ ավելի ճիշտ և տեղին օգտագործել այնպիսի տերմինաբանական հասկացություններ, ինչպիսիք են՝ «ուսուցման սկզբունքներ», «դիդակտիկ սկզբունքներ» և «ուսուցման մեթոդական սկզբունքներ»:

Հեղինակների գերակշռող մեծամասնությունը շատ կարևոր դիդակտիկական սկզբունքներին են վերաբերում, օրինակ՝ «ուսուցման դաստիարակչական բնույթը» [9, 13, В. В. Белинович 1958; В.В. Белорусова, И. Н. Решетень 1986; К. Sosniski 1948; Հ. Մ. Մախչանյան, Ա. Ս. Մանուկյան, 1997]:

Տարբեր առարկաներից գիտամեթոդական գրականության աղբյուրների ուսումնասիրման արդյունքում բացահայտվեցին դիդակտիկական սկզբունքների բնորոշման 6 բառակապակցություններ:

Դրանց են վերաբերում՝ «սիստեմայնություն–սիստեմայնություն և հաջորդականություն», «գիտակցականություն–գիտակցականություն և ակտիվություն», «մատչելիություն–մատչելիություն և անհատականացման», «հաջորդականություն–հաջորդականություն և սիստեմայնություն», «պահանջների աստիճանական բարձրացման–առաջադեմ», «տեսություն և պրակտիկայի կապի–ուսուցման և պրակտիկայի կապի–ուսուցումը և կյանքի կապի»:

Հատուկ ուշադրության է արժանի մասնագետների կարծիքը՝ առանձնացվող դիդակտիկական սկզբունքների քանակի և դրանց գերակայող նշանակության վերաբերյալ: 1–ին աղյուսակից երևում է, որ դասական դիդակտիկայում առանձնացվում են մինչև 9 ուսուցման սկզբունքներ, իսկ գերակայող են հա–

www.sportedu.am

մարվում դրանց 6-7-ը (մինչև 60 տոկոս):

Աղյուսակ 1


Տարբեր առարկաների դասագրքերի հեղինակների կողմից առանձնացված դիդակտիկական սկզբունքների քանակը տրվում է

Սկզբունքների քանակը	3	4	5	6	7	8	9
Գիտական ուղղությունները							
Ընդհանուր մանկավարժություն			17,6	35,3	29,4	17,6	
Ֆիզիկական դաստիարակություն	13,3		60,0	20,0			6,7
Սպորտային մանկավարժություն	7,1	14,3	35,7	28,6	14,3		
Ընդամենը	6,5	4,3	36,9	28,3	15,2	6,5	2,2

Նրանց միջև առկա է սերտ կապ, մեկի խախտումը բերում է մյուսի խախտմանը: Դրանք գիտակցության և ակտիվության, մատչելիության, գիտականության, դաստիարակող ուսուցման սկզբունքներն են: Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ներկայացուցիչները մատնանշում են 3-9 սկզբունքներ, իսկ գերակայող են համարվում 5 կամ 60 տոկոսը (գիտակցականություն-ակտիվություն, զննականություն, սիստեմայնություն, մատչելիություն, կայունություն): Տարբեր մարզաձևերից դասագրքերի հեղինակները

նշում են 3-7 սկզբունքներ, իսկ առավել կարևորում են 5-6 կամ 28,6-35,7 տոկոսը (գիտակցականություն-ակտիվություն, զննականություն, սիստեմայնություն, կայունություն, մատչելիություն, պահանջների աստիճանական աճ):

Այսպիսով՝ ամփոփելով երեք գիտական ճյուղերի դասագրքերը և ուսումնական ձեռնարկները, կարելի է եզրակացնել, որ 36,9 տոկոս դեպքերում գերակայող են 5, իսկ 28,3 տոկոսի՝ 6 դիդակտիկական սկզբունքներ: Առավել պատկերավոր է դա դիտարկել 2-րդ տրամագրում:



Տրամագիր 2. Գերակայող դիդակտիկական սկզբունքների բնութագիրը


Բացահայտվել է, որ առավել ցածր վարկանիշ ունեն այնպիսի դիդակտիկական սկզբունքներ, ինչպիսիք են՝ դինամիկությունը [8], ուսուցչի առաջատար դերը [6], անհատական և կոլեկտիվ ուսուցման ձևերի ռացիոնալ զուգակցման [13], պարապրոլների տարիքային առանձնահատկությունների հաշվառումը [14], արդյունավետությունը [12], պրոբլեմայնությունը [16], գիտելիքների օպերատիվությունը [10], մարդու մեջ դրականի վրա հենվելը [5], կիրառական ուղղվածություն [7]:

Մենք չենք կիսում որոշ հեղինակների կարծիքն այն մասին, որ առողջարարական ուղղվածությունը և բազմակողմանիությունը դրանք ուսուցման դիդակտիկական սկզբունքներ չեն [7]: Կամ ինչ է նշանակում և մեկնաբանվում «ուսուցման բուն դիդակտիկական սկզբունք» հասկացությունը:

Փորձ է արվել նաև դիտարկել առավել մեծ տեսակարար կշիռ ունեցող հինգ դիդակտիկական սկզբունքների հարաբերակցություններ երեք գիտական ուղղությունների լույսի ներքո (Տրամագիր 3):

Ուշագրավ է, որ երեք խմբի բոլոր հեղինակները առավելությունը և նախապատվությունը տալիս են գիտակցականություն և ակտիվության սկզբունքին, իսկ մանկավարժ-դիդակտները նաև կայունության սկզբունքին (94,1-100տոկոս):

Փոքր ինչ ցածր է սիստեմայնության (64,7 տոկոս) ընդհանուր մանկավարժություն դասագրքերի հեղինակների և մատչելիության և կայունության (50-60 տոկոս) ֆիզիկական դաստիարակության տարբեր մարզաձևերի դասագրքերի հեղինակների մոտ նշված դիդակտիկական սկզբունքների արժեքականությունը



Տրամագիր 3. Դիդակտիկական սկզբունքների հարաբերակցությանն առանձին գիտական ուղղությունների կտրվածքով, տոկոսով՝

1. գիտակցություն-ակտիվություն,
2. զննականություն,
3. սիստեմայնություն,
4. մատչելիություն,
5. կայունություն:

Դիդակտիկական սկզբունքների զարգացման գործում ոչ պակաս ներդրում ունեն նաև հայ մանկավարժները և մտավորականները: Այսպես՝ դեռևս 4-5-րդ դարերում Ե. Կողբացին [3] գտնում էր, որ նյութեղեն աշխարհը ազդում է զգայության օրգանների վրա, որի արդյունքում մարդը ճանաչում է իրականությունը: Ուստի, հայ մանկավարժները ուսուցման ժամանակ ուշադրությունը քննում էին տեսողական, լսողական և շարժողական անալիզատորների վրա՝ կիրառելով մարմնամարզական վարժություններ (Ռաֆֆի, 1984, Գ. Արծրունի, 1904, Ա. Բուդաղյան, 1906, Պ. Պոռշյան 1963 և այլք): Հետաքրքիր է նաև, որ Յու. Ա. Կոմենսկուց շատ առաջ 7-
www.sportedu.am

րդ դարում և Ա. Շիրակացին (605-690) առաջարկել էր ուսուցման գործընթացում ղեկավարվել «հեշտից դժվարը» և «պարզից բարդը» դիդակտիկական կանոններով: Այդ գաղափարն արդեն 14-րդ դարում հաստատեց Գր. Տաթևացին, իսկ 19-րդ դարում՝ Ղ. Ալամդարյանը:

Աշխարհահռչակ հայ փիլիսոփա Դ. Անհաղթը (5-6-րդ դարեր) մատնանշել էր ուսուցանելիս մատչելիության սկզբունքի կիրառման կարևորությունը և տեսական գիտելիքների և պրակտիկայի կապը: Հայ մանկավարժ լուսավորիչ Խ. Աբովյանը [1] ընդգրկել էր ուսուցման գործընթացում դիդակտիկական սկզբունքների իրականացման ուղիները և մեթոդները: Նա

համարում էր, որ ուսումնական գործընթացը պետք է լինի սիստեմատիկ, ակտիվ, զննական, մատչելի, գիտակցված: Հայ մանկավարժները մատչելիության դիդակտիկական սկզբունքը քննարկում էին ուսուցանվողների տարիքային անհատական հնարավորությունների տեսանկյունից (Ն. Զորայան, 1852; Ա. Բահատրյան, 1881; Ղ. Աղայան, 1963): Ուսումնասիրությունները վկայում են, որ հայ մանկավարժները դասակարգում էին 5-7 դիդակտիկական սկզբունքներ, ուր առավել գերադասելի էին համարում զննականություն և սիստեմայնությունը՝ 100 տոկոս, մատչելիությունը՝ 91,7 տոկոս, գիտակցություն-ակտիվությունը՝ 75 տոկոս [17]:

Եզրակացություն: Վերլուծությունը ցույց է տալիս, որ դիդակտիկայի բնագավառում առավել ճանաչված ու տարածված են համարվում այնպիսի տերմին-

նաբանական եզրույթներ, ինչպիսիք են՝ «ուսուցման սկզբունքներ», «դիդակտիկական սկզբունքներ» և «մեթոդական սկզբունքներ»: Դիդակտիկայի ոչ բոլոր սկզբունքներն են համահավասար, դրանք ենթարկվում են դաստիարակող ու զարգացնող ուսուցման, պարապողների բազմակողմանի ներդաշնակ զարգացման պահանջներին: Ուսուցման գործընթացի օրինաչափությունների արտացոլման խորությունը և հստակությունը որոշվում է մանկավարժության և նրա հարակից գիտությունների զարգացման մակարդակով՝ ֆիզիկական դաստիարակություն, սպորտային պատրաստություն, հոգեբանություն և այլն: Ուսուցման տեսությունում և պրակտիկայում երեք գիտական ուղղությունների դասագրքերի հեղինակների գերակշռող մեծամասնությունը մատնանշում է 5-6 դիդակտիկական սկզբունքների գերակայություն:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյան Խ., Երկերի լիակատար ժողովածու, Երևան., 1947-1956, հատ. 3-6:
2. Ամիրջանյան Յու. Ա., Ժամանակակից դիդակտիկա, Երևան, Լույս, 1991, 217 էջ:
3. Կողբացի Ե., Եղծ աղանդոց, Երևան, 1970, 59, 76, 182 էջ:
4. Կոմենսկի Յ. Ա., Մեծ դիդակտիկա, Երևան, Հայպետուսումնական հրատ., 1962, 357 էջ:
5. Մանուկյան Ս.Պ., Մանկավարժագիտություն. նոր դասընթաց, Երևան, 2002, էջ 120-141:
6. Боген М.М., Физическое воспитание и спортивная тренировка: обучение двигательным действиям.- М.: Книжный дом «Либроком» 2010.- с. 105-142
7. Булгакова Н. Ж., Плавание: Учебник.- М.: ФиС.- 2001,- 211 с.
8. Гужаловский А. А., Основы теории и методики физической культуры.- М.: ФиС.- 1986.- с. 49-55

9. Крившенко Л. П., Педагогика: Учебник .- М.: Проспект.- 2010 - 432 с.
10. Куписевич Ч., Основы общей дидактики (Пер. с польского). - М.: Высшая школа.- 1986.- 367 с.
11. Матвеев Л. П., Теория и методика физической культуры.- М.: ФиС., 1991.- 543 с
12. Оконь В., Введение в общую дидактику (Пер. с польского). - М.: Высшая школа.- 1990.- 382 с.
13. Пидкасистый П. И., Педагогика: Учебное пособие. - М.: Педагогическое общество России.- 1998.- 193 с.
14. Сластенин В. А. с соавт., Педагогика: Учебное пособие. - М.: Школа- Пресс.- 1998.-512 с.
15. Холодов Ж.К., Кузнецов В.С., Теория и методика физического воспитания и спорта.- М.: Академия.- 2004.- 480 с.
16. Харламов И.Ф., Педагогика: Учебное пособие. - М.: Высшая школа.- 1990.- 576 с.
17. Ghazaryan F. G. , Armenian trage in the formation of didactive principles of the ching//Scieuge in sport: modern issues-2023-N1(8)-pp.-78-87

ANALYSIS OF THE PRINCIPLES OF DIDACTICS THROUGH THE PRISM OF THREE SCIENTIFIC DISCIPLINES

*F. G. Ghazaryan, E.Z. Martirosyan
Armenian State Institute of Physical Culture
G. and Sport, Yerevan, Armenia*

ABSTRACT

Keywords: didactics, teaching principles, pedagogy, physical education, textbook, sports pedagogy.

Research relevance: The history of pedagogy shows that educators and thinkers from different countries and different eras constantly sought to define didactic principles of teaching, and the first attempts were outlined in the 16th-17th centuries. The principles of teaching reflect certain needs. Naturally, these principles evolve in response to the requirements of life, socio-economic conditions, of course, the principles of teaching also change: some lose their relevance while new ones emerge instead. The analysis of scientific and pedagogical literature indicates that there is no single definition of the structure of teaching principles among the authors, there is an inadequacy and inconsistency of opinions.

From this perspective, the didactic principles are examined and analyzed through the prism of three scientific directions.

Research aim and objectives: The purpose of the study is a retrospective analysis of didactic principles, and the Objective is to determine their priority Significance in three academic disciplines: general pedagogy, theory and methodology of physical education, and sports pedagogy.

Research methods and organization: The main research methods were historical-logical analysis, empirical methods of generalization of existing material. Several dozen sources including monographs, textbooks, encyclopedias, manuals have been reviewed.

Research result analysis: The research identifies unique terminological descriptions of didactic principles and six associated **word combinations**. Of the 9 principles accepted in classical pedagogy, 6 to 7 of them are of priority significance, 5 principles out of 3 to 9 prevail in the theory and methodology of physical education and, correspondingly, 5 to 6 principles out of 3 to 7 prevail in textbooks on various sports. Overall 5 (36.9%) and 6 (28.3%) principles are dominant didactic in the three scientific disciplines. The study found a low rating of such didactic principles as dynamism, the leading role of the teacher, a reasonable combination of collective and individual forms of learning, problem-based learning, practical orientation, efficiency and effectiveness. It is noteworthy that all three groups of authors prioritize the principles of consciousness and activity, while didactic teachers emphasize the principle of durability (94.1-100%). Armenian educators and thinkers also have made a significant contribution to justifying the didactic principles of teaching, as evidenced presented in the study by specific data.

Conclusion: The principles of didactics are subordinate to the requirements of comprehensive and harmonious teaching and development. The reflection of the teaching principles is determined by the level of development of didactics and related disciplines, such as physical education, sports training, psychology and others. The priority of 5-6 didactic principles in the learning process has been identified.

АНАЛИЗ ПРИНЦИПОВ ДИДАКТИКИ СКВОЗЬ ПРИЗМУ ТРЕХ НАУЧНЫХ ДИСЦИПЛИН

Ф.Г. Казарян, Э.З. Мартиросян

*Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: дидактика, принципы обучения, педагогика, физическое воспитание, учебник, спортивная педагогика.

Актуальность исследования. История педагогики свидетельствует, что педагоги и мыслители разных стран и разных эпох постоянно стремились определить дидактические принципы обучения, а первые попытки были очерчены в 16-17вв. Принципы обучения отражают определенные потребности. Под влиянием требований жизни, социально-экономических условий, естественно, меняются и принципы обучения: одни теряют свой смысл, а взамен появляются новые. Анализ научно-педагогической литературы свидетельствует о том, что среди авторов нет единого определения состава принципов обучения, прослеживается неадекватность и разноречивость мнений. С этой точки зрения дидактические принципы рассмотрены и проанализированы сквозь призму трех научных направлений.

Цель и задачи исследования. Целью исследования является ретроспективный анализ дидактических принципов, а задачей – определение их приоритетной значимости в трех учебных дисциплинах: общая педагогика, теория и методика физического воспитания, и спортивная педагогика.

Методы и организация исследования. Основными методами исследования являлись историко-логический анализ, эмпирические методы обобщения существующего материала. Изучены несколько десятков источников информации – монографии, учебники, энциклопедии, пособия.

Анализ результатов исследования. В итоге изучения выделены авторские терминологические обозначения дидактических принципов и 6 словосочетаний в их определении. Из признанных в классической педагогике 9 принципов приоритетное значение имеют 6-7 из них, в теории и методике физического воспитания из 3-9 доминируют 5 принципов и в учебниках по разным видам спорта соответственно из 3-7 – 5-6 принципов. В целом в трех научных дисциплинах доминирующими дидактическими являются 5 (36, 9%) и 6 (28,3%) принципов. В исследовании установлен низкий рейтинг таких дидактических принципов как динамичность, ведущая

www.sportedu.am

роль преподавателя, рациональное сочетание коллективных и индивидуальных форм обучения, проблемности, прикладной направленности, оперативности, учета эффективности. Примечательно, что все три группы авторов преимущество отдают принципам сознательности и активности, а педагоги-дидакты – и принципу прочности (94,1-100%). Немалый вклад в обосновании дидактических принципов обучения внесли также армянские педагоги и мыслители, на что приведены конкретные данные.

Краткие выводы. Принципы дидактики подчинены требованиям всестороннего и гармонического обучения и развития. Отражение принципов обучения определяется уровнем развития дидактики и смежных с ней наук - физическое воспитание, спортивная подготовка, психология и другие. Определена приоритетность 5-6 дидактических принципов в процессе обучения.

Տեղեկություններ հեղինակների մասին

Ֆրունզիկ Գաբրիելի Ղազարյան՝ մ.գ.դ., Ֆիզիկական դաստիարակության տեսության, մեթոդիկայի և ադապտիվ ֆիզիկական կուլտուրայի ամբիոնի պրոֆեսոր,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, Email: frunz.ghazaryan@sportedu.am

Էրիկ Ջավենի Մարտիրոսյան՝ մ.գ.թ., Ֆիզիկ մարզաձևերի ամբիոնի դոցենտ,

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E-mail: erik.martirosyan@sportedu.am ORSID: 0009-0002-5171-1761

Information about the authors

Frunzik Gabriel Ghazaryan, Doctor of Pedagogical Sciences, Professor of the Chair of Theory and Methodology of Physical Education and Adaptive Physical Culture, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, Email: frunz.ghazaryan@sportedu.am

Eric Zaven Martirosyan, PhD in Pedagogy, Associate Professor of the Chair of Cyclic Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E-mail: erik.martirosyan@sportedu.am, ORSID. 0009-0002-5171-1761

Հոդվածն ընդունվել է 10.09.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 12.09.2024–ին:

Գրախոս՝ մ.գ.թ., դոցենտ Ա. Հակոբյան

ՀՏԴ 796.011.2

DOI: 10.53068/25792997-2024.3.13-63

ԿՐՈՆԸ ԵՎ ՀՈԳԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՍՊՈՐՏՈՒՄ ԵՎ ԿԱՐԱՏԵՂՈՅՈՒՄ

ԱԶԳԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՅՍ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

Ա. Ս. Ղարախանյան

Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան

Առանցքային բառեր: Հոգևորություն, կրոն, սպորտ, մշակույթ, հոգևոր մղում, հավատք, կարատեի դաստիարակչական ազգային համակարգ, գաղափարախոսություն, արժեք:

Հետազոտության արդիականություն: Հոգևորություն տերմինը բարդ հասկացություն է, որի բովանդակությունը փոխվում է՝ ըստ մշակութային, կրոնական և ակադեմիական ծագման: Մի շարք հետազոտողներ կարծում են, որ հոգևորություն տերմինն իր իմաստային և հայեցակարգային կողմերով համընկնում է դրական հույզերի և կրոնի հասկացության հետ: [4]: Սակայն, մեր համոզմամբ, այս երկու հասկացություններից մեկը՝ դրական հույզերը, կախված դրանց ծագման աղբյուրից, (մեր ներքին երկխոսության մեջ) կարող է հոգևորության հետ որևէ աղերս չունենալ և էապես չարտահայտել հոգևոր վերաբերմունք կամ արձագանք, ինչպես բարեկեցության վերաբերյալ սուբյեկտիվ դատողությունները, իսկ կրոն հասկացությունը՝ որպես գիտակցության ձև, աշխարհայացք է և բացառապես հիմնված է հոգևորի և աստվածությունների նկատմամբ ունեցած հավատքի վրա: «Հոգևորություն» տերմինը պետք է

դիտարկել որպես ժամանակակից կրթության գաղափարական հայեցակարգ. այն մտավոր հասկացություն է և որոշիչ դեր ունի կյանքի ընտրության համար, որը գնահատվում է գերագույն արժեքներով և արտահայտվում համոզմունքներում, վերաբերմունքի և գործողության մեջ: Յուրաքանչյուր մարդ ունի հոգևորություն քանի դեռ նա ունի հավատքով արտահայտված համոզմունքներ: Այսինքն՝ հոգևորությունը գտնվում է հավատքի ոլորտում և նրա համար ապացուցողական պատասխաններ գոյություն չունեն: Այն «ես»-ից դուրս հավատքի լայն հասկացություն է և ձգտում է հավատքով էլ պատասխանել կյանքի իմաստաբանական և գոյաբանական անապացուցելի բոլոր հարցերին: Հոգևորությունը ենթադրում է մշակութային և կրոնական պատկանելիություն, որով անձը նույնականոնում է այդ հոգևորությունը ներշնչող արժեքներով: Հետևաբար, կարատե դոյում և սպորտում արտահայտված հոգևորությունը ևս նույնական է այն կրոնի ներաշխարհին և հոգևոր պատկանելիությանը: Կարատեդոյում հոգևորությունը ձևավորվում է «դո»-ի համակարգային կրոնափիլիսոփայական

դրույթներով, որն ամրագրված է կարատեղոյի հենց անվանման մեջ՝ կողավորելով նրա ողջ հոգևոր-մշակութային բովանդակությունը:

Քենեթ Պարզամենտը հոգևորությունը սահմանել է որպես «սրբազան տիրույթ», որը վերաբերում է «Աստծո, բարձր ուժերի, աստվածության և տրանսցենդենտ իրականության գաղափարներին» [7]: Հոգևորությունն այն զորեղ ուժն է, որը կյանքում, ինչպես նաև սպորտում մարդուն կարող է առաջ մղել բարձրագույն նպատակների, որի ներգործության հիմնական աղբյուրը կրոնն է: Ինչպես Նժդեհն է ասում. «Անկրոն էակը հրաշունչ զինվոր չի կարող դառնալ»: Հոգևոր համոզմունքներով ձևավորված արժեքներն են, որ ազգերին և ժողովուրդներին միաբան և ավելի կենսունակ են դարձրել: Հոգևորությունը կրոնի արտահայտություն է, և ոմանք մտածում են, որ հոգևորությունը սահմանումից դուրս է, և նրա ընկալումները ոչ նմանական: Այս վերաբերմունքի պատճառը պայմանավորված է տարբեր մշակութային և կրոնական հայեցողությամբ, ինչպես օրինակ՝ քրիստոնյաները հոգևորությունը հասկանում են՝ որպես սուրբ հոգու ներգործություն, մինչդեռ մահմեդականների համար հոգևորությունը ուղղություն է դեպի իմաստի ավելի խորը ըմբռնումներ, հրեաները հոգևորությունը կարող են զգալ Աստծո հետ իրենց կատարած ուխտի հարաբերություններում, իսկ բուդդայական հոգևորությունը վերաբերվում է

տառապանքների ավարտին՝ լուսավոր ըմբռնման միջոցով: Ինչպես երևում է բուլոր դեպքերում, հոգևորությունը վերաբերում է տրանսցենդենտի հետ կապին կամ հարաբերություններին, որտեղ սրբության տարրը կրոնի կենտրոնական կետն է, որի գոյությունն ու իսկությունը առանցքային է հոգևորության համար, որոնք բնութագրվում են մարդկային կյանքի բարձր իդեալներով և գաղափարներով:

Ապրելու և գործելու հանունների կոնցեպտը (հանուն ինչի), պայմանավորված հավատքով, սպորտում և կյանքում կարող է բերել արդյունքների աննախահեռա աճի: Հոգևոր մղումներով պայմանավորված մարդկային իդեալների և մարզական բարձր արդյունքների ձեռքբերման համար մեծապես կարևոր է, որ այդ ակտիվությունը սպորտում իրագործվի ինքնազերազանցման և ինքնահաղթահարման ճանապարհով և այդ ոգևորության ամենազոր ուժը թաքնված է հոգևոր ինքնաճանաչողության և հավատքի մեջ: Ուստի, կրոնը և հոգևորությունը պայմանավորված հավատքով մարզիկներին կարող է առաջ մղել դեպի սպորտային բարձր արդյունքներ՝ որպես նվիրագործություն, հանուն ազգի և եկեղեցու: Այսպիսի մղումներով արտահայտված ձեռքբերումները մեծապես կարող են ծառայել ազգին և պետությանը, բայց ոչ Հեգելյան այն պնդմամբ, որ մարդիկ պատմության գործիքներ են, որոնցից թաքցվում է պատմության իմաստը [3] այլ հոգևոր www.sportedu.am

բարձր գիտակցությամբ և առաքինությամբ, որով կարտահայտվի մարդկային նվիրագործ հոգևորությունը: Հայեցողական այս տարբեր ըմբռնումներով և խորը վերլուծական մտքի լուսավորությամբ փորձենք սպորտում, կարատեդոյում և ամենուր պահպանել հայ քրիստոնյաներիս համար մեր հոգևոր ներգործության միակ աղբյուրը՝ քրիստոնեական հավատքը, և նրա սրբության տարրը հանդիսացող մեր առաքելական սուրբ եկեղեցին:

Այս շեշտադրումով էլ ներկայացված է սույն հետազոտության արդիականությունը, որով պայմանավորված է հայ մարզիկների հոգևորությունը սպորտային բարձր ձգտումներով:

Հետազոտության նպատակն է՝ քրիստոնեական հավատքով և իդեալներով սահմանել և կարևորել՝ կարատեիստ հայ մրզիկների սպորտային բարձր արդյունքների և հոգևոր ճշմարտության ձեռքբերման ազգային ուղին՝ որպես հայկական հոգևորության և ինքնության արտահայտիչ:

Հետազոտության խնդիրներն են.

1. Հայ կարատեիստների մոտ ներքին մտավոր գննությամբ ձևավորել վերաբերմունք մի շարք կրոնների և դավանաբանական հայացքների վերաբերյալ:

2. Քրիստոնեական հոգևորությունը դիտարկել՝ որպես հայ կարատեիստների գործունեության գլխավոր առաջնորդություն:

3. Ձևավորել կարատեի ազգային-դաստիարակչական համակարգի վերաբերյալ անհրաժեշտ պատկերացումներ:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Կիրառվել են հետազոտության հետևյալ մեթոդները՝ գիտամեթոդական գրականության ուսումնասիրում և վերլուծում, մանկավարժական դիտումներ, զրույց:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Սպորտային գործունեության պատմական ընթացքը գնահատելիս հասկանում ենք, որ հնագույն քաղաքակրթություններում այն իրագործվել է կրոնական պաշտամունքային սովորույթների շրջանակներում և հանդիսացել է ժամանակի սուրբ ավանդույթի մի մասը:

Դեռևս Հոմերոսի ժամանակներում կրոնական ծեսերի նվիրագործության և այդ հոգևորության արտահայտման արդյունքում ի հայտ եկան տարբեր մրցաշարեր և ձևավորվեցին այնպիսի մարզաձևեր ինչպիսիք են բռնցքամարտը (պիզմաչիա), պալեն (հին հունական ըմբշամարտի ձև), պանկրատիոնը (բաղկացած էր պիզմաչիայի և պալեի տարրերից), վազքը, սկավառակի նետումը, նետաձգությունը, նիզակի նետումը և այլն, որոնց միջոցով հին օլիմպիական խաղերում ցուցադրվում էին հույների կրոնական փորձառությանները նվիրված Ջևսին: Համահեղինական մյուս խաղերը ևս ունեին կրոնական և հոգևորություն արտահայտող յուրահատուկ շրջանակ.

Դելֆիում կազմակերպվել էին Պյութիական խաղերը՝ ի հիշատակ Ապոլոնի վիշապի նկատմամբ տարած հաղթանակի, Իսթմիական խաղերը Կորնթոսում փոխկապված էին Պոսեյդոնի պաշտամունքի հետ, իսկ Նեմեայի խաղերը կատարվում էին ի պատիվ Զևսի: Սխալված չենք լինի եթե ասենք, որ գործնականում մարդու ներքին կարողությունները բացահայտելու ամենազդեցիկ և արդյունավետ ճանապարհը դեռ վաղ ժամանակներից հանդիսացել է հոգևորությունը, որի հիմքը եղել է կրոնը և հավատքը: Կուբերտենը անգամ համոզված էր, որ հնարավոր է օլիմպիզմը նույնականացնել կրոնի հետ, ինչպես վկայում է նրա «religio athletae» տերմինը, որը հիմք դարձավ «Մկանային քրիստոնեություն» շարժմանը: Պատմությանը նաև հայտնի է, որ Ամերիկայի նախագահ Թեոդոր Ռուզվելտը մեծացել է մի ընտանիքում, որտեղ դավանում էին «մկանային քրիստոնեություն», և ինքն էլ հանդիսանում էր այդ ուսմունքի ակնառու հետևորդներից մեկը [1]: Սակայն «մկանային քրիստոնեություն»-ը կրոնական ուղղություն ընկալելու այս երևույթը հանգեցնում է քրիստոնեական դավանաբանության խեղաթյուրման և աղանդավորական չարիքի: Այլ բան է, որ սպորտը կարող է աջակցել կրոնին և կարող է անգամ հանդես գալ որպես աստվածային առաքինությունների և բարձր արժեքների ներկայացման հարթակ, որտեղ հավատքն ու քաջությունը միախառնվում են

հանուն հուսացած հաղթանակի: Այս համատեքստում, եթե փորձենք կողավորել «առողջ հոգի՝ առողջ մարմնում» Պլատոնյան հայտնի բանաձևը հայ մարզիկների ինքնության առնչությամբ, կստացվի՝ անհրաժեշտ է ունենալ հայկական առաքինագործ ոգի և այն կրելու համար արժանավոր մարմին, որը պատյանն է մեր ոգու: Հոգևորությունը սպորտում այն աներևույթ և զորեղ ուժն է, որ գոտեպնդում է մարզիկին և հաղթանակի հավատքով առաջ մղում, իսկ մարմինը նրա ֆիզիկական արտահայտության միջոցը՝ մրցումներում ներկայանալու շարժողական հմտություններով: Եթե մարմնի ֆիզիկական որակները տեսանելի են, և դրա կարողությունները՝ չափելի, ապա ոգին, որը շարժում է մեր մարմինը, աներևույթ է և նրա ուժը անսահմանելի, և եթե մարմինը պետք է մարզել, և նրա խնամքը կարևոր է ժամանակավոր հաղթանակների համար, ուրեմն որքան առավել պետք է կարևորել ոքու խնամքը, որը իմաստ է փնտրում կյանքի գրեթե բոլոր շարժումներում, հավերժության հաղթանակի և ազգապատկան ինքնության համար:

Հետևաբար, հոգևորությունը գործնականում կարող է հասնել այնպիսի սպորտային արդյունքների, որքանով սպորտը կարող է իմաստ փնտրել հոգևոր գիտակցության մեջ:

Ի վերջո կարատեդոյում ևս գլխավոր շեշտադրումը արված է հենց նրա հոգևոր

ասպեկտի՝ «դո»-ի վրա, որով արտահայտված է նրա ողջ էությունը և հոգևոր ճանապարհը: Հետևաբար, սպորտում, մասնավորապես Հայաստանյան կարատեդոյում ևս անչափ մեծ և կարևոր է հոգևորության դերը որպես գործունեությանը իմաստ և ուժ հաղորդելու անհրաժեշտություն:

Հոգևորության վերաբերյալ մարդաբանական և աստվածաբանական մշակույթային պատկերացումները ֆիզիկական դաստիարակության մեջ և սպորտում.

Իսլամում հոգևորությունը նշանակում է Աստծուն ակնածանք և երկրպագություն բոլոր հարցերում և շարժումներում՝ Աստծո իրավահաջորդությունը երկրի վրա ձեռք բերելու համար [2]: Իսլամական իրավագիտության ավանդական տեսությունը, որը կարգավորում է մահմեդականների հասարակական կյանքը, իրենից ներկայացնում է հոգևորության հանդեպ կանոնական կարգապահություն, որը ճանաչում է շարիա աստվածային օրենքները: Շարիաթը իսլամական իրավագիտության մեջ կոդավորում և մեկնաբանում է Ղուրանում ամրագրված էթիկական սկզբունքները և ապահովում իսլամական սահմանադրական մոդելը՝ սահմանելով իր բարոյական և իրավական առաջնորդությունը կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում՝ ընտանեկան և սոցիալական նորմատիվ կարգավորումներից մինչև սպորտ և քրեա-

կան պատասխանատվություն: Մահմեդականների հոգևորության նվիրական զգացումը և Աստծո հանդեպ ունեցած ակնածանքը անգամ կարող է արտահայտվել «ջիհադով», որը իսլամական օրենսդրությամբ թույլատրելի պատերազմի ձև է՝ ուղղված այն երևույթների դեմ որոնք վնասում են իրենց կրոնը և մահմեդական հասարակությանը [5]: Պայքարի այս ձևը մահմեդականներից պահանջում է ֆիզիկական բարձ պատրաստվածություն, որը իսլամում անշուշտ խրախուսվել է: Դա է վկայում Ղուրանում և իսլամական տարբեր գրական աղբյուրներում այն նկարագրությունները, որտեղ Մուհամեդ մարգարեն մասնակցել կամ խրախուսել է մի շարք մարզական գործունեություններ, ինչպիսիք են են լողը, նետաձգությունը, ուղտերի մրցավազքը, ձիավարությունը, մրցավազքը, ըմբշամարտը և այլն, որի գործունեությունը արտահայտվել է իսլամական օրենքներով և նրան բնորոշ ոգևորությամբ: Նետաձգությունը, ինչպես նաև ռազմական նշանակություն ունեցող այլ մարզաձևերը, համարվել է արդյունավետ գործիք «Ջեհադ» իրականացնելու համար: Հարկ է նշել, որ Մուհամեդ մարգարեն ասել է, որ պարզևներ են սպասվում երեք բանի համար՝ ուղտերի մրցավազքի, ձիավարության և նետաձգության, քանի որ սրանք «Ջեհադ»-ի հմտություններ են: Իր հոգևորության համատեքստում Իսլամը շեշտադրում է ֆիզիկական դաստիարակության կարևորությունը՝ որպես մարդու կարևոր ձեռքբերում, որը

Ղուրանի և հաղիսների տարբեր հատվածներում մուսուլմաններին կոչ է արվում զբաղվել ֆիզիկական ակտիվությամբ: Ըստ իսլամի՝ մարդիկ կարող են հաղթահարել իրենց շրջապատի ցանկացած մարտահրավեր, եթե նրանք գտնվում են բարձր ֆիզիկական պատրաստվածության մեջ: Հաղիսում մենք կարդում ենք. «Ուժեղ հավատացյալը Ալլահի համար ավելի լավ և սիրելի է, քան թույլը»: Ինչպես նաև հայտնի է դառնում, որ Մուհամեդ մարգարեն տիրապետել է ըմբշամարտի հնարքներին և Ռուկանա բին Աբդուլյազիզի հետ պայքարում դարձել է հաղթող: Մեր օրերում ևս շարիաթի հոգևոր պատասխանատվությունը իր հետևորդներից պահանջում է նպատակի ուժեղ զգացում, հաստատական վճռականություն և հոգևորություն՝ ինչպես սպորտում, այնպես էլ կյանքի բոլոր ասպարեզներում:

Հուդայականության առաջին բաղադրիչը ուխտն է: Հրեական հուդայականությունը մովսեսական ուխտը պահելու մեջ է, որը հաստատվել է Աստծո և իրենց նախնիների միջև [6]: Հրեաները կարող են նաև ուխտի գալ սեփական ժողովրդի հետ հարաբերություններում: Աստված Մովսեսի միջոցով Սինա լեռան վրա հրեա ժողովրդին տվեց Թորան՝ Մովսեսի հինգ գրքերը, որը հանդիսանում է Հուդայականության հիմնական Աստվածաշունչը: Բացի բնօրինակ գրավոր թորայից, հետագայում ավելի ուշ

կազմվեց ռաբիական գրառումների հավաքածուն՝ Թալմուդը, որը եբրայերեն նշանակում է «ուսմունք», կոչված այն գաղափարին, որ «ողջ հրեա ժողովուրդը պատասխանատու է միմյանց համար»: Թալմուդը կրոնական, կենցաղային, իրավական կանոնների ու պատվիրանների ժողովածու է, այն ծառայում է որպես հրեական մտքի և ձգտումների «առօրյա կյանքի ուղեցույց»: Թորայում գրված է, որ Աստված հրեա ժողովրդին խոստացավ Քանանի երկիրը, որի արդյունքում էլ ձևավորվեց հավատք առ այն, որ հրեա ժողովուրդն ունի ինքնորոշման ազգային իրավունք՝ որպես սեփական ազգ: Այս գաղափարախոսությունը, որն արդեն կրում էր հազարամյակների վաղեմություն՝ հիմք հանդիսացավ «սյունիզմի» ձևավորմանը՝ որպես քաղաքական գաղափարախոսություն՝ Սիոն լեռան մոտ «հրեական պետություն» ստեղծելու պահանջով: Սիոնիստները ոչ մի կրոնական և քաղաքական և ֆիզիկական ջանք չխնայեցին, որպեսզի հազարավոր հրեաների ամբողջ աշխարհից վերադարձնեն իրենց պատմական հայրենիքը և Իսրայելը հռչակեն որպես անկախ պետություն և հրեական ինքնության կենտրոն: Այսօրինակ մարտահրավերներում հաղթանակների հասնելու համար, անշուշտ, հրեա հասարակությունից պահանջվել է ֆիզիկական մեծ ջանք և հոգևորություն: Ռաբբի Ավրահամ Յիցհակ Կուկը, ով հրեա ժողովրդի մեծագույն հեղինակություն էր և հանդիսանում էր

www.sportedu.am

Երուսաղեմի Աշքենագի, ինչպես նաև հետազայում՝ Պաղեստինի Աշքենագի գլխավոր ուսուցիչ, Orot HaTechiya 34-րդ գլխում խորալուծող երիտասարդներին բացահայտորեն խրախուսում է ֆիզիկապես ուժեղանալ դեռևս այն ժամանակ ապագա հրեական պետության կերտելու համար, ինչպես նաև գրում է. «Երբ երիտասարդները սպորտով են զբաղվում իրենց մարմիններն ու հոգիները ուժեղացնելու համար, ավելի ուժեղ ազգ լինելու բարօրության համար, այս սուրբ գործը բարձրացնում է Աստվածային նախախնամությունը նույնքան, որքան Դավիթ թագավորի երգերը»: Նա շարունակում է. «Մեր ֆիզիկական պահանջը մեծ է: Մեզ պետք է առողջ մարմին: Մենք շատ գործ ունենք հոգևորության հետ, մենք մոռացանք մարմնի սրբությունը, մենք անտեսել ենք ֆիզիկական առողջությունն ու ուժը, մենք մոռացանք, որ սուրբ մարմին ունենք ոչ պակաս, քան սուրբ հոգին...» [9]: Հուդայականության ևս մեկ ավ նշանավոր կերպար՝ Մովսես Մայմոնիդեսը, մի ամբողջ գլուխ նվիրեց ֆիզիկական առողջությանը և հոգևորությանը իր մեծ գործի՝ *Միշնե Թորայում*, որտեղ գրում է. «Մարմինը առողջ և առույգ պահելով՝ քայլում ես Աստծո ճանապարհով... մարդու պարտականությունն է խուսափել այն ամենից, ինչը վնասում է մարմնին և զարգացնել սովորություններ, որոնք նպաստում են առողջությանն ու առույգությանը»: Հրեա

հասարակության մեջ սպորտային ամենամեծ շարժումը սկսվեց 1929 թվականին, երբ ստեղծվեց «Մաքքաբի» միջազգային հրեական սպորտային կազմակերպությունը: Սիոնիստները վերցրել էին այս անունը, քանի որ մակաբայականները հրեա հերոսներ էին, որոնք կռվում էին անկախության համար և որոնց օրինակը ուսուցողական էր երիտասարդ հրեաների համար: Սիոնիստական երիտասարդական այս շարժումը կենտրոնացավ Մաքս Նորդաուի (բժիշկ, գրող, քաղաքական գործիչ և համաշխարհային սիոնիստական կազմակերպության համահիմնադիր) «մկանային հուդայականություն» գաղափարախոսության վրա՝ սպորտը և հուդայական հոգևորությունը միախառնելով իրար:

Բուդայականությունը հիմնված է անձի հոգևոր զարգացման վրա: Բուդդիզմը, հատկապես Արևելյան Ասիայի երկրներում, հոգևոր մշակութային առումով գրեթե նույնացված է կոնֆուցիականության և դաոիզմի հետ՝ որպես իրար լրացնող գաղափարախոսություններ: Ըստ գիտական աղբյուրների Կոնֆուցիականությունը, բուդդիզմը և դաոիզմը՝ որպես փիլիսոփայական գաղափարախոսություններ, եղել են այն երեք ամենահայտնի ուղղությունները, որոնք գիտնականները լայնորեն մեջբերումներ են կատարում, երբ փորձում են հասկանալ արևելյան ասիացիների յուրահատուկ աշխարհայացքը և վարվեցողությունը: Սակայն հարկ է նշել նաև, որ դաոսիզմը,

բուդդիզմը և կոնֆուցիականությունը ոչ միայն տարբեր են հայեցակարգային և մետաֆիզիկական մակարդակներում, այլև կիրառվում են առօրյա կյանքում շատ տարբեր ձևերով և միավորվում ամբողջապես: Օրինակ՝ կոնֆուցիականությունը հիմնականում կառավարում է սոցիալական համակարգի կառուցվածքը և բարոյական պահանջների չափանիշները և սոցիալականացման և արտաքին չափանիշերի աղբյուր է, իսկ բուդդիզմը և դաոհիզմը հիմնականում առաջարկում են դիմակայելու և աջակցության ճանապարհներ: Բուդդայականության մեջ, երբ խոսքը վերաբերում է ֆիզիկական դաստիարակության մեջ կամ սպորտում հոգևորության բացահայտմանը, մեր առջև դրված խնդիրը դառնում է առավել պարզ և հանգամանալի, քանի որ խնդրի պատասխանը ինքնին արևելյան մարտարվեստներն են, որոնց փիլիսոփայությունը այնպես է միահյուսված բուդդիզմին, որ մեկի լիարժեք ըմբռնումը պայմանավորված է մյուսի իմացությամբ: Այդ արմատական կապը նկատվում է հենց առաջին հայացքից՝ արևելյան մարտարվեստների անվանման մեջ ամրագրված «դո» մասնիկով, որն արտահայտում է նրա ողջ էությունը և հոգևորությունը: Սխալված չենք լինի եթե ասենք, որ մարտարվեստը պարզապես միջոց կամ հոգևոր պրակտիկայի անոթ է հմուտ գործողություններով սահմանված ճանապարհն անցնելու համար, իսկ մրցակ-

ցային Բուդդան վարպետության, առաջնորդության և հոգևորության մասին է [10]: Ըստ բուդդիզմի՝ մարդկային ողջ գոյությունը լցված է տառապանքով, որից կարելի է ենթադրել, որ ֆիզիկական պատրաստվածությունը անհրաժեշտություն է այդ մարտահրավերներին դիմակայելու համար: Բուդդայական գաղափարախոսությունը կյանքի էությունը սահմանում է տառապանքի իր հայեցակարգից՝ հաստատելով նրանում տեղի ունեցող աստիճանական փոփոխությունների հաջորդականությունը: Եթե զուգահեռաբար այս գաղափարը դիտարկենք արևելյան մարտարվեստների, ինչպես նաև կարատեդոյի պարագայում կնկատենք, որ տառապանքները և դժվարությունները այստեղ ևս մեծ են, որոնք լցված են զգացմունքային և հոգեբանական յուրահատկություններով, ինչպես նաև աստիճանական փոփոխությունների հաջորդականությամբ և հասունացմամբ: Եվ հոգևոր այս ազդակը առաջնորդում է որպես մարդկային մտքի հրամայական, որով ֆիզիկական և հոգևոր կատարելագործումը դառնում է որպես ներքին հոգևորություն արտահայտող խորաթափանց և անքննին աներևույթ մի բան: Թեև ցանկալի է պարզ տրամաբանությամբ բնութագրել և հասկանալ այս հոգևորության դիմագիծը, սակայն արևելյան մարտարվեստներում, ինչպես նաև կարատեդոյում հոգևորության բնույթը միանշանակ նկարագրելը անհնար է ինչպես Տաո Թե Չինգում Լաո Յզին է

www.sportedu.am

ասում. «Անունը, որը կարելի է նկարագրել, մնայուն ու անփոփոխ Տաոն չէ» [11]: Պարզապես այն տառ է և այն պետք է ներքնապես զգալ՝ առանց խոսքերի:

Ինչպես տեսնում ենք հոգևորությունը ունի ինքնություն և ազգային պատկանելիություն:

Անկախ այն հանգամանքից, թե մարդիկ ինչ կրոնական պատկանելիություն են կրում, միևնույն է բոլորը հավատքի միջոցով ակնկալում են մխիթարություն և փրկություն՝ բախվելով միևնույն էկզիստենցիալ իրավիճակին, որտեղ մահը սպառնում է մարդու «գոյությանը», իսկ մարդը հոգևորությամբ, աստվածահաճո գործերով և ինքնակատարելագործման ճանապարհով ձգտում է ազատագրվել այդ «սահմանափակությունից»:

Կրոնի և հոգևորության ներկայությունը սպորտում պետք է դիտարկել որպես դրական աճի և հոգեբանական պատրաստվածության լավագույն միջոց: Հոգևորությունը և հոգևոր ազդակը ի հայտ է գալիս որպես մարդկային հիմնարար հրամայական, և դրա կատարելագործումն ու մշակումը սպորտում՝ որպես ներքին պատրաստականության և մոտիվացիայի աղբյուր, մարզիկին կարող է մղել բանական գործողության, որի ծագումը արմատապես կրոնական է: Սպորտում հոգևորությունը կենտրոնացած է միատիկ փորձառությունների վրա արտահայտված անձի սեփական հավատքով և կրոնական համոզմունքներով:

www.sportedu.am

Աղոթքը սպորտում հաճախ ամենատեսանելի հոգևորության արտահայտման ձևն է, որը կիրառվում է անորոշ և բարդ իրավիճակներում՝ հասցեագրված նյարդայնության և անհանգստության դեմ՝ հանուն պայքարի և հուսացած հաղթանակի: Միաստվածական կրոնական փորձառության մեջ (քրիստոնեություն, իսլամ և հուդայականություն) մարզիկները իրենց աղոթքը ուղղում են Աստծուն, մինչդեռ բուդդայականության, դաոսականության հոգևորության հետևորդները, օգտագործում են մեդիտացիայի հատուկ տեխնիկա, որը հատկանշական է ինչպես կարատեին, այնպես էլ արևելյան մյուս մարտարվեստներին:

Կրոնական այս համակարգերը, իհարկե, բախտորոշ դեր են խաղացել ազգերի և ժողովուրդների ճակատագրերում՝ ուժ և հոգևորություն հաղորդելով և նրանց պատմության քառուղիներում դարձնելով ավելի կենսունակ: Սակայն, կա մի շատ կարևոր հարց, որն էապես կարող է ազդել ոգևորության ուժի և ազդեցության վրա, և այդ ուժը բացարձակ համոզմունքն է այն գաղափարին, որին ծառայում են տվյալ ազգերը և ժողովուրդները՝ պահպանելով իրենց հոգևոր ինքնությունը:

Ելնելով մեր հետազոտության առարկայի ուսումնասիրություններից՝ հոգևորության և նրա ազդեցության ուժի վերաբերյալ մեր առաջադրված խնդիրներից, այստեղ կարևոր է հասկանալ՝ արդյոք այս համակարգերը պահպանել են իրենց

հոգևորության աստվածաբանական արժանահավատությունը սպորտում և ժամանակակից կյանքում: Սխալված չենք լինի, եթե ասենք, որ հատկապես պետական քարոզչական մակարդակներում կրոնական այս հոգևորությունները գրեթե կորցրել են իրենց աստվածաբանական պատկանելիությունը: Երբևէ հետաքրքրել է մեզ՝ տարբերվում է արդյոք իսլամը իսլամիզմից, հուդայականությունը՝ հուդիզմից, բուդդայականությունը՝ բուդդիզմից: Առաջինները, իհարկե, կրոններ են, մինչդեռ վերջիններս «իզմները»՝ արմատական քաղաքական ծրագրեր և կանոնակարգեր, որոնք ուղղված են հասարակության վերափոխմանը՝ հանուն կառավարման և պետական շահերի, որոնք իրագործվում են հատուկ մշակված դաստիարակչական համակարգերի և իրավական լծակների օգնությամբ: Սակայն մշակույթների այսօրինակ հարցերի համատեքստում բովանդակային առումով կրոնների վերլուծությունները չեն հանդիսանում մեր քննության առարկա, ուստի միայն մեր ուսումնասիրության շրջանակներում հայ մարզիկների մոտ կարատեում և սպորտում հոգևոր ինքնության մեջ կողմնորոշվելու համար անհրաժեշտ են համարում ընդգծել, որ այս համակարգերում միայն քրիստոնեությունն է, որ չի ածանցվում «իզմներով» և ենթարկվում այդօրինակ քաղաքականացված ձևափոխումների: Իհարկե, այս երևույթը չպետք է շփոթել աղանդավորական շարժումների հետ, որոնք

առկա են գրեթե բոլոր կրոններում, քանի որ նրանց հերձվածողական պնդումները միայն աստվածաբանական են:

Համաձայն Օգոստինոսի «Մարդու ժամանակավոր քաղաքը և Աստծո քաղաքը» հայտնի մոդելի՝ հավատքն ու քաղաքականությունը բաժանելի ոլորտներ են: Սակայն, այստեղ խոսքը չի կարող վերաբերվել պետական քաղաքական, ռազմավարական այն ծրագրերին, որոնց նշանակությունը ամենևին էլ կրոնը «իզմներով» քաղաքականացնելը և իրեն ծառայեցնելը չէ, այլ աջակցումն է այն հոգևոր արժեքներին, որոնք պատկանում են տվյալ ազգի մշակույթին: Հետևաբար, երևույթի իսկությունը կայանում է նրանում, որ քաղաքական գաղափարախոսությանը և ծրագրերին հոգևորություն հաղորդելով՝ գաղափարը վեհացվում է՝ դառնալով առավել գերակա և անառարկելի, քանի դեռ արժանահավատ է և չի բացահայտվել նրա ողջ էությունը: Քաղաքականությանը հուզական կշիռ և հազևորություն հաղորդելու համար, չի կարելի կրոնը օգտագործել որպես «քաղաքական վարդապետություն»՝ որովհետև, երբ կրոնը դառնում է քարոզչական գործիք, իսկ քաղաքականությունը՝ կառավարող համակարգ երևույթի վերաբերյալ հավատքի և վստահության բացակայության պատճառով մարդու մոտ տեղի է ունենում ներքին խզում և անհամաձայնություն, որը հանգեցնում է «հոգևոր ճգնաժամի», որովհետև կրոնը աստվա-

ծային է և բացարձակ, և այն չի կարող ծառայել քաղաքականությանը և մարդկային սահմանափակումներին: Ամենավեհ գաղափարախոսություններն անգամ, որոնք մարդկային ձևակերպումներ են՝ մարդկային միտքը սահմանափակում է գաղափարախոսության շրջանակներում, աշխարհը ընկալելու իր ինքնատիպությամբ, որովհետև աշխարհի ընկալումը ոչ թե նրա տեսանելի գոյություն մեջ է, այլ՝ մարդկային ձգտումների: Ըստ դոկտոր Սթիվեն Քոլվեյի՝ «Մենք աշխարհը տեսնում ենք ոչ թե այնպիսին, ինչպիսին այն կա, այլ այնպիսին, ինչպիսին մենք ուզում այն տեսնել» [8]: Հետևաբար, եթե գաղափարախոսության և մարդկային ձգտումների մեջ չկա հոգևոր իմաստավորում կամ աստվածաբանական խորություն, այն չի կարող լինել բացարձակ և մի օր նրա սպառողական պահանջները կավարտվեն, որովհետև այն, ինչ ստեղծված է ժամանակների համար և պատկանում է ժամանակներին, չի կարող լինել հարատև, և ժամանակիների մեջ էլ այն կանհետանա, իսկ հոգևորությունը վերաբերում է հավերժին՝ Աստվածային ճշմարտությանը: Հիշենք Խորհրդային Միության հզոր համակարգը, որը ստեղծվել էր կոմունիստական «անկոտրուն» գաղափարապոսությամբ և միլիոնավոր կյանքերի գնով չգոյատևեց անգամ մեկ դար: Հոգևոր գիտակցության մեջ մարդկային փնտրումը առ Աստված կամ գերբնականը ողջված է փրկությանը:

Միայն թե այս ճանապարհը յուրաքանչյուրի համար, կախված հավատքից, ուրվագծվում է ներքին համաձայնությամբ, և այն կարող է լինել տարբեր միջոցներով և շնորհներով, այդ թվում՝ և սպորտով, որպես արտաքինը ներքին աշխարհին կապող կամուրջ, որը պետք է ծառայեցնել Աստուծուն կամ հավատքին, և նրա սրբության տարրը հանդիսացող մեզ նախախնամությամբ տրված ժառանգությանը՝ հայրենիքին, որի վրա պետք է եկեղեցիանա սեփական ազգը:

Այսպիսով՝ կյանքի իմաստի փնտրումը, ինչպես բոլոր կրոններում, հանդիսանում է մարդու գոյությունը իմաստավորելու ամենաառանցքային դրույթը: Այսպիսի համոզմունքները, ի տարբերություն քաղաքական ձգտումների, ձևավորվում է ներքին համաձայնությամբ և աշխարհի մասին գոյաբանական սուբեկտիվ ընկալումներով, որը հաստատվում է այդ ներքին համաձայնեցված իրականության հավատքով և ճշմարտություններով, որոնցով ձևավորվում են մեր բարձրագույն արժեքները: Կարատեի հոգևորությունը ևս իմաստ է փնտրում սպորտային գործունեության մեջ, և նրա կապը կարատեի կրոնական գաղափարների հետ մշտապես պաշտպանվում է հոգևոր ավանդույթներով: Այս հատուկ կարգապահությունը բխում է ճապոնական մշակույթի կրոնական հայացքներից, որով պայմանավորված է կարատեի օրգանական կապը մասնավորապես բուդոյայակա-

նության հետ: Մարզական փոխաբերությունները այստեղ օգտագործվում և գնահատվում են առավելապես հոգևոր տեսանկյունից, քանի որ սպորտը դիտարկվում է ոչ թե որպես ինքնուրույն օգտակար, այլ՝ որպես փոխաբերություն կարատեի հոգևոր կողմը հասկանալու համար, հոգևորը այստեղ, որպես կյանքի միկրոտիեզերք, ավելին է, քան սպորտը:

Կարատեի ազգային դաստարակչական համակարգի կարևորությունը

Յուրաքանչյուր անձ ունի արժեքների հերարխիա, որի գագաթնակետը իր ամենաբարձր բարիքն է՝ («summum bonum» -ը (բարձրագույն բարիք -լատիներեն արտահայտություն է, որը նշանակում է ամենաբարձր կամ վերջնական բարիքը, որը ներկայացվել է հռոմեացի փիլիսոփա Ցիցերոնի կողմից): Հայ մադու համար «summum bonum» -ը պետք է լինի հավատքը առ Աստված՝ որպես բոլոր արժեքների բարձրակետ և հոգևորության աղբյուր, որով պետք է սնել բոլոր գիտակցված դատողությունների և որոշումների հիմքը, հետևաբար, նաև բոլոր նպատակների և գործողությունների հիմքը, որովհետև դա է բնորոշ հատկությունը և էությունը հայի ինքնությանը: Ցանկացած գործողություն, որը հիմնված է նույնիսկ ամենաթեթև մտորումների վրա՝ լավի կամ վատի, ճիշտ կամ սխալի, պայմանավորված կոնկրետ անձի գնահատման չափանիշներով, կողմնորոշվելու համար անհրաժեշտ է, որ նա գի-

տակցված հղում կատարի իր համոզմունքներին, թեև պետք է նկատել, որ որոշ գործողություններ կարող են լինել ռեֆլեքսային կամ բնազդային, հետևաբար, խոսքը այստեղ ամենևին էլ չի կարող վերաբերվել, նրանց համոզմունքային պատկանելիությանը: Կարատեում պետք է ձևավորել հոգևոր դաստիարակչական ազգային համակարգ, որը կծառայի հոգևոր առաքելություններով զինված ֆիզիկական, հուզական, հոգևոր և մտավոր ներուժով օժտված անհատականությունների ձևավորմանը: Այն պետք է հիմնված լինի քրիստոնեական կենդանի հավատքով և նրանով արտահայտված ազգային արժեքներով, որոնց կողմնորոշմամբ պետք է իմաստավորել հայ մարդու ինքնությունը և նրա առաքելությունը այս կյանքում: Հոգևորության վրա հիմնված կարատեի դաստարակչական ազգային մոդելը հայ կարատեիստների համար հնարավորություններ կընձեռի նրանց գոյության փիլիսոփայության վեհացմանը և կյանքի վերաիմաստավորմանը: Այդպիսի հավատը բերում է շնորհի, ներքին ուժերի և կարողությունների ծաղկման, իր տեսակի արժեքավորման և կյանքը ճիշտ գնահատելու կարողության: Առաջարկված մեր համակարգի հուսալիությունը պետք է դիտարկել ճշմարիտ հավատքի և գիտելիքի միջև վճռորոշ կապով և հայկական ինքնության իմաստավորմամբ Համակարգը պետք է ունենա այն ֆիլտրը, որով կգտվեն և ճանաչողական

գիտելիքներով կկողավորվեն այն ածանցյալ արժեքներն ու գաղափարախոսությունները, որոնք սնվում են մեր հավատքից՝ դրանով իսկ ամրագրվելով մեր հոգևոր նկարագիրը: Հոգևոր այդ գիտակցումը պետք է պարզեցնի մեր որոշումների կայացումն սկզբունքային մոտեցումները՝ նվազեցնելով կամ վերացնելով մեր մտավոր և հոգևոր ջանքերը, որոնք ներգրավված են կյանքի իմաստային փնտրումների և աշխարհի ըմբռնման բարդ փոխգործակցությունների առատության մեջ: Առաջարկված մոդելի նշանակությունը քրիստոնեության կիրառումը չէ հանուն նպատակների, այլ այդ նպատակներն է պետք իրագործել հանուն քրիստոնեական և ազգային արժեքների:

Եզրակացություն: Ազգը՝ որպես հոգեղեն ուժ, պարզապես հավաքական հավատք է, իսկ հայ ազգի հավաքականության և փրկության ուղին՝ հասարակության եկեղեցիացման ճանապարհը: Եկեղեցին մեզ դարերով միավորել է, կրթել ու զորացրել է՝ դարձնելով մեզ ազգ եւ Աստծո ժողովուրդ: Այս առումով Հայ Եկեղեցին մեր ինքնության և հոգևոր արժեքների ինստիտուցիոնալ պահպանն ու երաշխավորն է, ինչպես նաև Աստծո սիրո և մեր փրկության ճանապարհը լուսավորող հաստատությունը մեր

ազգային կյանքում: Այսպիսի ամրագրումը մեր համոզմունքների մեջ մեզ կձևավորի որպես պատմության մասնակիցներ և ապագան կերտող ժաղովուրդ՝ մեր կյանքը դարձնելով թռիչքների և հաղթանակների ճշմարիտ հարթակ, իսկ կարատեստների ազգային դաստիարակության պատկերում բարձրագույն արժեքների առաքինի զգացողությունները, որը սնում է հավատքը, կմիախառնվի նրանց վերաբերմունքին և գործողություններին՝ առաջ մղելով դեպի սպորտային նվիրական բարձունքներ:

Հայերիս համար Քրիստոնեական հավատքը մեր հոգևոր ազատագրման միակ ճանապարհն է և մեր կյանքի արժեքային հիմքը, իսկ կարատեստի և այլադավան այլ մարավեստների սերմանած հոգևորության պանդխտությունից ազատագրվելու և հայ կարատեստի ինքնությունը իմաստավորելու միակ ճանապարհը կարատեն որպես մարզաձև ուսուցանելն է և վերադարձը դեպի ազգային արմատներ և եկեղեցի, որն իր անվանման մեջ առաքելական շեշտադրումով աշխարհին մեզ ներկայացնում ենք որպես առաքելական ազգ, որը ոչ միայն հոգևոր ծագումնաբանություն է, այլև կենդանի առաքելություն և ճշմարտության ճանապարհ, առանց այլաբանությամբ և հայկական ինքնությամբ:

📖 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Andres, Sean (2014). 101 Things Everyone Should Know about Theodore Roosevelt. Adams Media. pp. 31–32. ISBN 978-1440573576.:
2. Designing the Pattern of Spiritual Leadership Based on Islamic Values: Research Based on Grounded Theory Method with an Emphasis on the Characteristics of the Guard Commander, Major General Shahid Ahmad Kazemi/ Authors.Mesbah Alhoda Bagheri Kani, Hasan Sa'adabadi,Publication date 2011/9/23 Journal Strategic Management Thought, Issue 2, Pages 57-122, Publisher Imam Sadiq University:
3. Georg Wilhelm Friedrich Hegel: The Phenomenology of Spirit Georg Wilhelm Fredrich Hegel Edited and translated by Terry Pinkard, Michael Baur Published online: 12 February 2018Print publication: 22 February 2018:
4. Hill, P. C., Pargament, K. I., Hood, R. W., McCullough, M. E., Swyers, J. P., Larson, D. B., et al. (2000).:
5. Jihad What Everyone Needs to Know, By: Asma Afsaruddin, Series: What Everyone Needs to Know 240 Pages, PAPERBACK ISBN: 9780190647322, Published By: Oxford University Press, Published: March 2022:
6. Judaism: A Very Short Introduction (Very Short Introductions): Norman Solomon: Published by Oxford University Press (2014): ISBN 10: 0199687358, ISBN 13: 9780199687350
7. Pargament KI (2007) Spiritually integrated psychotherapy: Understanding and addressing the sacred New York: Guilford. 384 p.:
8. Stephen R. Covey (Author) The 7 Habits of Highly Effective People: Powerful Lessons in Personal Change Paperback – Special Edition, November 19, 2013 by :
9. The Essential Writings of Abraham Isaac Kook Paperback – April 1, 2006 / by Abraham Isaac Kook (Author), Ben Zion Bokser (Editor, Translator) :
10. The Competitive Buddha: Author Jerry Lynch Published Tantor Media, Inc., 2021.
11. **Tao Te Ching Laozi: Publisher : CreateSpace Independent Publishing Platform (July 12, 2016) ISBN-10 : 1535229330, ISBN-13 : 978-1535229333:**

RELIGION AND SPIRITUALITY IN SPORTS AND IN KARATE-DO:**NATIONAL EDUCATION IN THIS CONTEXT***A.S. Gharakhanyan**Armenian State Institute of Physical Culture
and Sport, Yerevan, Armenia***ABSTRACT**

Keywords: spirituality, religion, sports, culture, spiritual aspiration, faith, national karate training system, ideology, values.

Research relevance: The term "spirituality" should be considered as an ideological concept of contemporary education. It is a mental concept that plays a crucial role in lifestyle choices. Spirituality is a powerful force that, both in life and in sports, can drive a person forward toward higher goals, the main source of which is religion. Spirituality presupposes cultural and religious affiliation, which is expressed in karate do with its religious and philosophical views and ideas. Therefore, without having a national karate education system, such religious and philosophical views perspectives may deprive Armenian athletes of their national identity and spiritual affiliation.

Research aim and objectives: Considering Christian faith and ideals, to identify and emphasize the high athletic achievements of Armenian karate sportsmen and the achievement of spiritual truth as an expression of Armenian spirituality and identity.

The research problems are:

1. To develop attitudes towards a number of religions and confessional views among Armenian karatekas through face-to-face psychological research.
2. To consider Christian spirituality as the main guide for the activities of Armenian karatekas.
3. To establish essential concepts for a national classification system in karate.

Research methods and organization: The following research methods were used: the study and analysis of scientific and methodological literature, pedagogical observations, and conversation.

Research result analysis: Assessing the historical course of sports activity, we understand that in ancient civilizations it was implemented within the framework of cult practice and was part of the sacred tradition of that time.

We will not be disappointed if we say that the most influential and effective way to reveal person's inner abilities in practice was spirituality, which was based on religion and faith,

since ancient times Spirituality in sports has been invisible and powerful, power that encircles the sportsman and propels him forward with faith in victory.

Conclusion: The nation as a spiritual power is simply a collective faith, and the path of collectivity and salvation of the Armenian nation is the path of the churchification of society. Over the centuries, the Church has united us, educated and strengthened us, making us a nation and God's people. In this sense, the Armenian Church is the institutional guardian and guarantor of our identity and spiritual values, as well as an institution that illuminates the path of God's love and our salvation in our national life. Such a focus in our beliefs will shape us as participants in history and as people building the future, making our lives a real platform for jumps and victories, and in the image of the national karate team, virtuous feelings of higher values, nourished by faith, will mix with their views and actions, striving for sporting heights.

РЕЛИГИЯ И ДУХОВНОСТЬ В СПОРТЕ И КАРАТЕ-ДО И НАЦИОНАЛЬНОЕ ВОСПИТАНИЕ В ЭТОМ КОНТЕКСТЕ

А. С. Караханян

*Государственный институт физической культуры
и спорта Армении, Ереван, Армения*

АННОТАЦИЯ

Ключевые слова: духовность, религия, спорт, культура, духовное стремление, вера, национальная система тренировок по каратэ, идеология, ценности.

Актуальность исследования. Термин «духовность» следует рассматривать как идеологическую концепцию современного образования. Это ментальная концепция, которая играет решающую роль в жизненном выборе. Духовность – это мощная сила, которая в жизни, как и в спорте, способна подтолкнуть человека вперед к высшим целям, главным источником которых является религия. Духовность предполагает культурно-религиозную принадлежность, что выражается и в карате-до с его религиозно-философскими взглядами и идеями. Поэтому, не имея национальной системы образования в каратэ, подобные религиозно-философские взгляды могут лишить армянских спортсменов национальной идентичности и духовной принадлежности.

Цель исследования: Определить и подчеркнуть, с учетом христианской веры и идеалов, высокие спортивные результаты армянских спортсменов-каратеистов и достижение духовной истины как выражения армянской духовности и самобытности.

www.sportedu.am

Проблемами исследования являются:

1. Формировать отношение к ряду религий и конфессиональных взглядов у армянских каратеистов посредством очного психологического исследования.
2. Считать христианскую духовность основным руководством деятельности армянских каратеистов.
3. Сформировать необходимые представления о национальной классификационной системе каратэ.

Методы и организация исследования: Использовались следующие методы исследования: изучение и анализ научно-методической литературы, педагогические наблюдения, беседа.

Анализ результатов исследования: Оценивая исторический ход спортивной деятельности, мы понимаем, что в древних цивилизациях она реализовывалась в рамках культовой практики и была частью священной традиции того времени.

Мы не разочаруемся, если скажем, что наиболее влиятельным и эффективным способом раскрытия внутренних способностей человека на практике была духовность, основой которой были религия и вера. Духовность в спорте является невидимым и могущественным; сила, которая опоясывает спортсмена и продвигает его вперед с верой в победу.

Краткие выводы: Нация как духовная сила – это просто коллективная вера, а путь коллективности и спасения армянской нации – это путь воцерковления общества. Церковь на протяжении веков объединяла нас, воспитывала и укрепляла, делая нас нацией и народом Божиим. В этом смысле Армянская Церковь является институциональным хранителем и гарантом нашей идентичности и духовных ценностей, а также институтом, освещающим путь Божьей любви и нашего спасения в нашей национальной жизни. Такая фиксация в наших убеждениях сформирует нас как участников истории и народа, строящего будущее, сделав нашу жизнь настоящей площадкой для скачков и побед, а в образе национальной сборной по каратэ - добродетельных чувств высших ценностей, питаемые верой, будут смешиваться с их взглядами и действиями, стремясь к спортивным вершинам.

Information about the author

Arman Sarkis Gharakhanyan, Associate Professor of the Chair of Wrestling and Oriental Sports, Armenian State Institute of Physical Culture and Sport, Yerevan, Armenia, E.e-mail: arman.karakhanyan@sportedu.am

www.sportedu.am

Տեղեկություններ հեղինակի մասին

Արման Սարգսի Ղարախանյան՝ Ըմբշամարտի և արևելյան մարզաձևերի ամբիոնի դոցենտ, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան, E.mail: arman.karakhanyan@sportedu.am

Հոդվածն ընդունվել է 28.10.2024–ին:

Ուղարկվել է գրախոսման՝ 29.10.2024–ին:

Գրախոս՝ հ.գ.թ., դոցենտ Վ. Գեղամյան

ՀՏԴ 796.322

DOI: 10.53068/25792997-2024.3.13-81

**ՊԱՏԱՆԻ ՀԱՆԴՐՈՒԽՍՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ
ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

*Գ.Ժ. Միքայելյան, Հ.Հ. Մելքոնյան, Ե. Լ. Դավթյան
Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի և սպորտի
պետական ինստիտուտ, Երևան, Հայաստան*

Առանցքային բառեր: Հանդբոլ, մարզում, ֆիզիկական, տեխնիկական, պատրաստություն, պատրաստվածություն, պատանհներ:

Հետազոտության արդիականություն: Ժամանակակից հանդբոլը՝ բարձր մարզումային և մրցակցային բեռնվածություն է, մշտական լարվածություն, մրցակցի հետ անմիջական շփում, մրցակցային անզիջում պայքար: Խաղի բեռնվածությանը դիմակայելու, մրցակցի հանդեպ ունենալ մշտական առավելություն ունենալու համար, մարզիկը պետք է ունենա ֆիզիկական պատրաստվածության մեծ պաշար, տիրապետի մեծ թվով տեխնիկական հնարքների, տակտիկական տարբեր գործողությունների և ունենա բարձր բարոյակամային որակներ [2,8]:

Հանդբոլի մասնագետներ՝ Ն.Կլուսովը, Հ.Մելքոնյանը, Ա.Իզնատևը, Ա.Գրեչինը, Ի.Շեստակովը և այլք, գտնում են, որ առանց լավ ֆիզիկական պատրաստվածության անհնար է իրականացնել այն պահանջները, որոնք դրվում են պատանի հանդբոլիստների վրա և հասնել բարձր մարզական արդյունքների:

Մարզիկների ֆիզիկական պատրաստությունն ուսումնամարզական գործընթացի կարևոր բաղադրիչն է, որն ուղղված է մարզիկների օրգանների և օրգան-համակարգերի ֆունկցիոնալ կարողությունների բարձրացմանը, առողջության ամրապնդմանը և շարժողական ընդունակությունների (ուժ, արագաշարժություն, դիմացկունություն, ճարպկություն, ճկունություն) զարգացմանը [2,1,4,7]: Ֆիզիկական պատրաստության ամենակարևոր խնդիրներից մեկն է պատրաստել այնպիսի մարզիկների, որոնք ամբողջ խաղի ընթացքում պահպանեն խաղային արդյունավետությունը և դիմակայեն մրցակցային բեռնվածությանը:

Ֆիզիկական պատրաստությունը պետք է համապատասխանի տարիքային առանձնահատկություններին: Մարզիչը պետք է իմանա երեխայի ֆիզիկական ընդունակությունների փոփոխման դինամիկան, գիտենա շարժողական ընդունակությունների զագացման սենսիտիվ շրջանները և պլանավորի մարզման գործընթացն այնպես, որպեսզի նպաստի այդ ընդունակությունների առավելագույն աճին [4]: Մարզման գործընթացում առավել ուշադրություն պետք է հատկացնի այն

շարողական ընդունակությունների զարգացման վրա, որոնք հանդիմանաբար զարգանում են ֆիզիկական պատրաստվածության կարևորագույն ցուցանիշներ են: Շարժողական ընդունակությունների այդ խմբին են դասվում՝ արագաշարժությունը, կոորդինացիան, ճարպկությունը, դիպուկությունը, մկանային ուժը, դիմացկունությունը, ցատկունակությունը և այլն: Նման կարծիքին են նաև հանդիմանաբար զարգանալի հայտնի մասնագետներ Վ.Իգնատևսկի և Ա.Իգնատևսկի [3, 5]:

Ֆիզիկական պատրաստության գործընթացն արդյունավետ կառավարելու նպատակով անհրաժեշտ է՝ ռացիոնալ պլանավորել մարզումային գործընթացը՝ հաշվի առնելով պատրաստության փուլը, մարզիկների տարիքը, սեռը, ֆունկցիոնալ վիճակը, օպտիմալ կազմակերպել և ծրագրավորել մարզումները՝ մակրո-, մեզո- և միկրոցիկլերում: Անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել պատրաստության ընդհանուր և հատուկ միջոցների ռացիոնալ կիրառման և զուգորդման վրա, օպտիմալ զուգորդել մարզումային և մրցակցային բեռնվածությունները, փոփոխել բեռնվածությունները միկրոցիկլերում այնպես, որպեսզի արդյունավետորեն վերականգնվի աշխատունակությունը և յուրաքանչյուր պարապմունքը:

Ընդհանուր ֆիզիկական պատրաստության գործընթացում լայնորեն կիրառվում են ընդհանուր զարգացնող վարժություններ առարկաներով և առանց առարկաների, վարժություններ աթլետիկա,

մարմնամարզություն և ակրոբատիկա, ծանրամարտ, լող և այլ մարզաձևերից: Մարզումներում զգալի տեղ են գրավում նաև շարժախաղերը, ֆուտբոլը, բասկետբոլը: Հատուկ ֆիզիկական պատրաստությունը, որն ուղղված է հատուկ շարժողական ընդունակությունների զարգացմանը, իրականացվում է մրցակցային գործընթացին մոտեցված պայմաններում:

Անհրաժեշտ է նշել, որ ֆիզիկական պատրաստվածությունը գլխավոր պայման է տեխնիկայի արդյունավետ յուրացման համար:

Ֆիզիկական և տեխնիկական պատրաստության գործընթացը կազմակերպելիս անհրաժեշտ է պահպանել մարզման տարբեր բաժիններին հատկացվող բեռնվածության ծավալների տոկոսային հարաբերությունները՝ հաշվի առնելով սպորտային պատրաստության փուլերը: Սպորտային մասնագիտացման կամ մարզումային փուլում, որին համապատասխանում է մարզիկների 10-14 տարիքային շրջանը, ընդհանուր ֆիզիկական պատրաստությանը հատկացվում է մարզման ողջ գործընթացի 18-24%, հատուկ ֆիզիկականին՝ 16-21%, տեխնիկականին՝ 17-23% [9]:

Ժամանակակից հանդիմանաբար զարգացնող միայն ֆիզիկական, այլև տեխնիկական հնարքների բոլոր տարրերի բարձր մակարդակի տիրապետում [1,3,8], հետևաբար պատրաստության բոլոր փուլերում ուսումնամարզական գործընթացը պետք է հիմնված լինի մարզիկների

www.sportedu.am

անհատական տեխնիկայի մանրամասն մշակման և նրա անընդհատ կատարելագործման վրա:

Որպեսզի ֆիզիկական և տեխնիկական պատրաստության ողջ գործընթացը լինի կառավարելի, անհրաժեշտ է պարբերաբար վերահսկել այդ բաղադրիչների զարգացման ընթացքը և գնահատել պատրաստվածության վերջնական արդյունքները մարզման այս կամ այլ փուլում:

Վերջինս, ըստ մեր երկարատև աշխատանքային փորձի, վրիպում է մարզիչների տեսադաշտից՝ համապատասխան մեթոդական ցուցումների բացակայության պատճառով, որով նրանք կարող են ուղղորդվել աշխատանքային գործունեությունում՝ ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածությունը գնահատելու համար:

Հետազոտության նպատակը: Ուսումնասիրել պատանի հանդբոլիստների ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածության արդյունքների շարժը մարզման գործընթացում:

Հետազոտության մեթոդները և կազմակերպումը: Հետազոտությունում կատարել ենք գրական աղբյուրների ուսումնասիրման և վերլուծության, մանկավարժական թեստավորման և մաթեմատիկական վիճակագրության մեթոդները:

Հետազոտությունները անցկացրել ենք երկու փուլով, որին մասնակցել են Վանաձորի և Երևանի 11-12 տարեկան 1 կարգային 24 պատանի: Առաջին փուլն անցկացվել է 2022թ սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին, երկրորդը՝ 2023-ի մարտ-ապրիլ ամիսներին:

Հետազոտությունում կիրառվել են հետևյալ մանկավարժական թեստերը՝

- տեխնիկական պատրաստվածության գնահատում՝ 1. գնդակի վարում 20մ (վրկ.), 2.գնդակի նետում հեռավորություն թափավազքով (մ):
- Ֆիզիկական պատրաստվածության գնահատում՝ 1. Մաքրքավազք՝ 5x20 (վրկ.), 2. փոխանցում պատին 2մ հեռավորությունից՝ 30վրկ.:

Հետազոտության արդյունքների վերլուծություն: Հետազոտության առաջին և երկրորդ փուլերի ֆիզիկական և տեխնիկական պատրաստվածության թեստերի արդյունքների համեմատությունը ցույց տվեց, որ գրեթե բոլոր արդյունքներում մասնակիցների մոտ գրանցվել է աճ, բացառությամբ՝ Վանաձորի պատանիների գնդակի վարում 20մ վարժության ցուցանիշում, 2-րդ փուլում գրանցվել է ցուցանիշի վատացում՝ միջին արդյունքը 8.65 վրկ.՝ վատացել է մինչև 9.23 վրկ.[աղյուսակ 1]:

Աղյուսակ 1

Վանաձորի հանդբոլիստների առաջին և երկրորդ փուլերի ֆիզիկական և տեխնիկական պարաստվածության արդյունքները

Հետազոտության փուլերը	I փուլ 2022թ			II փուլ 2023թ		
	X	σ	m	X	Σ	m
Ցուցանիշներ						
